

ԽՈՒՄԱՆԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ

պարմական գիտ. դոկտոր

1890-ԱԿԱՆ ԹԹ. ՆԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Գերմանական պարմագրությունը Նայկական հարցը դիտարկելիս հաճախ է անդրադարձել այդ առնչությամբ Բեռլինի կոնգրեսին հաջորդող տարիներին մեծ պետությունների դիրքորոշումներում ի հայտ եկած փոփոխություններին. հանգամանք, որ օգնում է պարզաբանել այն հարցը, թե ինչու 1890-ական թթ. կոպորացիաների ժամանակ նրանց կողմից ի նպաստ հայերի որևէ միջամտություն ի հայտ չեկավ:

Նույն Պրեյլերը և Լուիզե Դիկերհոֆը, օրինակ, իրենց ուսումնասիրություններում նշում են, որ եթե Անգլիան 1878 թ. Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու հարցում ամենաշահագրգիռ պետությունն էր, իսկ Ռուսաստանը Թուրքիայի տրոհման ջերմ կողմնակից էր, ապա 1890-ական թթ. առաջին կեսին նրանց դիրքորոշումներն արմատապես փոխվել էին: Ռուսաստանը շարունակ ավելի էր ուղղորդվում դեպի Արևելյան Ասիա և ցանկանում էր Թուրքիայի հետ սահմանում հանդարտություն ունենալ, մինչդեռ Անգլիան շահագրգռված էր Թուրքիայի տրոհմամբ, և դա պայմանավորված էր առաջին հերթին այնպեղ կառավարող լիբերալների, մասնավորապես Վիլիամ Գադսդենի ու Արիստոթել Ռոզմեյնի դիրքորոշմամբ: Արդեն 1894-ին, Սասունի կոպորացիաներից հետո Անգլիան Օսմանյան կայսրության տրոհման առաջարկ և ծրագիր էր ներկայացրել Ռուսաստանին, ըստ որի՝ Կոստանդնուպոլիսը, նրա շրջակայքը և Փոքր Ասիայի՝ Ռուսաստանին հարող տարածքները անցնելու էին Ռուսաստանին, Ավստրիան ստանալու էր ազատ ելք դեպի Սալոնիկ, ինչպես և փոխհատուցում Բալկաններում, Իտալիան ստանալու էր Տրիպոլիսը, Ֆրանսիան՝ Սիրիան, Անգլիան՝ Եգիպտոսը, և Գերմանիային նույնպես պետք է որոշ տարածքներ հարկացվեին: Ցարական կառավարությունը, սակայն, այդ ծրագիրը չէր ողջունել¹:

1895 թ. Ռուսերը Արթուր Սոլսերին, որը հունիսից Անգլիայում վարչապետ էր, փորձեց Թուրքիայի մասնավորման հարցը համաձայնեցնել Վիլհելմ 2-րդի հետ, բայց վերջինս նույնպես մերժեց²: Փաստորեն՝ դեռ հայկական զանգվածային կոպորացիաների նախա-

1 Տե՛ս H. Preller, *Salisbury und die türkische Frage im Jahre 1895*, Stuttgart 1930, էջ 27, 29: Նման L. Dieckerhoff, *Deutschland - England und das Orientproblem in den neunziger Jahren*, Münster 1926, էջ 130:

2 Պրեյլերն այն տեսակետն է արտահայտում, որ Սոլսերին այդ ծրագիրը «կես սրտով» և իր սեփական համոզմունքին հակառակ, գլխավորապես բրիտանացի հակաթուրքական կողմնորոշում ունեցող լիբերալների և բրիտանյան ճնշման պակասի պատճառով չէր ողջունել: 1895 թ. սեպտեմբերին, այսինքն՝ կոպորացիաների սկզբնավորման

շեմին Օսմանյան կայսրության փարաձային ամբողջականությունը պահպանելու վերաբերյալ մեծ պետությունների ներքին փոխհամաձայնությունն արդեն կայացել էր: Ուվե Ֆայգելը, անդրադառնալով այդ հարցին, այն փեսակերն է արտահայտում, որ մեծ պետությունները Մերձավոր արևելքում զուրալ հավասարակշռությունը չէին կամենում խախտել, քանի որ Թուրքիայի մասնապարտը կմեծացներ պարսկազմի բռնկման հավանականությունը, որին նրանք իրենց դեռ պարտասար չէին համարում: Ուստի գերադասում էին մինչև իսկ հայերին զոհաբերելու գնով պահպանել Օսմանյան կայսրության սպարտուս քվոն³:

Ինչ վերաբերում է, մասնավորապես, Նայկական հարցի հանդեպ Կայսերական Գերմանիայի ցուցաբերած վերաբերմունքին, ապա պետք է նշել, որ բիսմարկյան ժամանակաշրջանում թե՛ Օսմանյան Թուրքիայի հետ փոխհարաբերությունները և թե՛ Նայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ առանցքային տեղ չէին զբաղեցնում: Ինչպես մինչև իսկ Վիլհելմ II-ն էլ իր հուշերում նշել, Օսմանյան Բիսմարկը մշտապես արհամարհական կերպով էր արտահայտվում Թուրքիայի մասին⁴: Բիսմարկի՝ առայթի վերաբերմամբ այն նկատառումը, որ նա ամբողջ Թուրքիան չէր փոխի մեկ պոմերանյան հեպտակայինի ոսկորների հետ, միանգամայն բնութագրում էր այդ երկրի հանդեպ նրա որդեգրած դիրքորոշումը⁵: Նայտց հարցին և հայերին քաղաքական աջակցություն ցուցաբերելու հնարավորության խնդրին Բիսմարկն առաջին անգամ անդրադարձել է 1876 -ին՝ նշելով, որ իհարկե, յուրաքանչյուր քրիստոնյա իրավունք ուներ մտախոհվելու այլ երկրների ճշմարտությանը, իրարմաների դրությամբ, սակայն Գերմանիան պետք է հրաժարվեր նրանց օգնելու համար նախաձեռնություն ցուցաբերելուց, եթե այլ պետությունները դա կարող էին ավելի լավ անել և այդ հարցում ռազմավարական ավելի մեծ շահագրգռվածություն ունեին⁶: Երկրորդ անգամ նա Նայկական հարցին անդրադարձել էր 1883 թ. Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ռադովիչին ուղղված իր հրահանգում: Նա դեսպանին հանձնարարում էր բարեփոխումների իրականացման հարցում քրիստոնյական ճշման առնչությամբ այն փեսակերն արտահայտել, որ Նայտսպարնը նաև ռուսական ու պարսկական փարաձայններ էր բնոգրում, և սուլթանը նախ և առաջ այդ երկրների կառավարությունների հետ պետք է կապ հաստատեր՝ համարել կերպով մի լուծում գտնելու համար: Միաժամանակ Բիսմարկը Ռադովիչին հրահանգում էր ձգտել, որ սուլթանի հեղինակությունը չթուլանար, և Նայկական հիմնախնդիրն էլ «ձգձգումներով» քննարկել⁷:

ժամանակ, նա արդեն վճռել էր ձեռնպահ մնալ Նայկական հարցի շուրջ որևէ միջամտությունից: Այս պարագային, նշում է Պրեյլերը, ինքնին հասկանալի է, որ քրիստոնյաներն անգործ մնացին, և Սուլթանին 1895 թ. հայտարարեց, թե միայն թուրքերն իրենք կարող են փեսական բարեփոխումները երաշխավորել: **H. Preller**, *Salisbury...*, էջ 34, 59, 78:

3 Տե՛ս **U. Feigel**, *Das Evangelische Deutschland und Armenien*, Göttingen 1989, էջ 39:

4 Տե՛ս **U. Wilhelm II**, *Ereignisse und Gestalten*, Leipzig/Berlin, էջ 23:

5 Բիսմարկն այդ արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է 1876 թ. դեկտեմբերի 5-ին Ռայխսպարլամենտի 11-ին դարձյալ Ռայխսպարլամենտում այն վերահաստատել է: Տե՛ս **U. Feigel**, նշվ. աշխ., էջ 40:

6 Die große Politik der Europäischen Kabinete 1871-1914. Hg. **Johannes Lepsius**, *Mendelssohn-Bartholdy, Albrecht, Thimme, Friedrich*, Bd. 2, Berlin 1923, էջ 88:

7 **H. Holborn**, *Deutschland und die Türkei 1878-1890*, Berlin 1926, էջ 112-113: Նման. **U. Feigel**, նշվ. աշխ., էջ 40: «Բիսմարկի համակարգը Թուրքիայի քրիստոնյաների հանդեպ, նշում է Ուվե Ֆայգելը, որոնց ծանր դրությունը նա չէր վիճարկում, այնքան հեռու չէր գնում, որ զուրալ քաղաքական հավասարակշռության սպարտուս

Թուրքիայի հանդեպ բխմարկյան քաղաքական «անտարբերությունը», այնուհանդերձ, 1880-ական թթ. երկրորդ կեսից սկսում էր փոփոխվել: Գերմանիան Վիլհելմ II-ի նախաձեռնությամբ ռազմական գործի մասնագետներ ուղարկեց Թուրքիա՝ թուրքական բանակը վերակառուցելու համար: Միաժամանակ ստեղծվում էին փոփոխական նոր կապեր, իսկ 1889 թ. կայսրն ինքը մեկնեց այնպեղ՝ երկկողմ կապերի զարգացումը որոշակիորեն խթանելու համար: Ուշագրավ է, որ այդ զարգացումը սկզբնական շրջանում, երբ Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացումը Գերմանիայի համար դեռ արտաքին քաղաքական գերակայություն չէր, գերմանական կառավարությանը չէր խանգարում որոշակի «ըմբռնում» ցուցաբերելու Թուրքիայում ծայր առած հայկական կոտորածների և հայերի ծանր դրության հանդեպ: Դեռ 1895 թ. հոկտեմբերին ԱԳՆ պետքարտուղար Ադոլֆ Մարշալ ֆոն Բիրերշտայնը հայտարարում էր, որ Բ. Դոմանը անհրաժեշտ էր «պարասխառնարվության ենթարկել» կոտորածների համար⁸: Գործնականում, սակայն, ոչինչ չձեռնարկվեց, և դրան որպես արդարացում ծառայում էր այն պարզառարարությունը, թե առաջին հերթին ոչ թե Գերմանիան էր իրավասու և պարտավոր միջամտության դիմելու, այլ՝ Անգլիան: Ըստ ֆոն Բիրերշտայնի՝ նույն տարվա դեկտեմբերին կատարած պարզաբանման, հենց Անգլիայի մասին էր խոսք այդ հարցում, քանի որ նա էր հայերին դրդում թուրքերի դեմ՝ Եգիպտոսը ստանալու համար: Բացի այդ՝ պետքարտուղարը համոզված էր, որ Անգլիան ավելի մեծ միջոցներ ուներ միջամտելու համար, ուստի նա էլ պետք է դա աներ⁹:

Ինչ վերաբերում է անձամբ Վիլհելմ II-ին, ապա նա ինչպես 1895-ին, այնպես էլ 1896 թ. օգոստոսին հայկական ջարդերի մասին հեռագրային տեղեկություններ ստանալուց հետո մեծ վրդովմունքով դարապարտել էր կոտորածները: Նա մասնավորապես նշել էր, որ հարկավոր էր գահընկեց անել սուլթանին, որին, ի դեպ, նա անվանել էր «նողկալի մարդ»: Կայսրը նաև հայտարարել էր, թե անհրաժեշտ էր վճռականորեն հանդես գալ Բ. Դոման դեմ և նրա հետ խոսել «թնդանությունների լեզվով»: Միաժամանակ նա չէր թերացել ըմբռնումով և ցավակցությամբ արտահայտվել հայերի դրության առնչությամբ՝ նշելով, որ փոփոխությունները գերազանցում էր նախկինում կատարված բոլոր սպանությունները, և որ այն «մի խսկական բարդությունների գիշեր» էր¹⁰:

Այնուհանդերձ Վիլհելմ II-ը նույնպես մտադիր չէր այդ հարցում նախաձեռնություն հանդես բերել, այլ գտնում էր, որ դա պետք է աներ Անգլիան, որին նա իր հայանպասք կեցվածքի և քայլերի պարզառարար կապերի ծանր դրության հիմնական մեղավորն էր համարում: «Եռանդուն միջամտության պահանջը միանգամայն արդարացված է, նշում էր կայսրը, քանի որ այն դերը, որը մենք, որպես Եվրոպա, մուսուլմանների հանդեպ խաղում ենք, ավելի քան խղճով է: Այն, սակայն, որ Անգլիան դա ուրիշներից է ակնկալում, ոչ հենց իրենից, ուղղակի ծիծաղելի է, եթե նկատի առնվի, որ այդ ամբողջ խառնաշփոթը Անգլիան է ստեղծել»¹¹:

թվին վրանգվել: Նա ավելի հակված էր գործողությունների ձեռնարկումը դրանցում ավելի շահագրգռված պետություններին թողնելու»: Անդ:

8 Die große Politik..., էջ 72:

9 Տե՛ս Ս. Feigel, նշվ. աշխ., էջ 41:

10 Անդ:

11 Անդ:

Գերմանական կառավարությունը, փաստորեն, Կոնգրեսի լինելով եղբայրական իրադարձություններին, սկզբնական շրջանում դրանք դարապարտելով, նաև կողմ լինելով ի նպաստ հայերի Թուրքիայի վրա ճնշում գործադրելուն՝ մտադիր չէր այդ հարցում նախաձեռնություն ցուցաբերել, և դա գլխավորապես թելադրված էր Բ. Դոան հետ պաշտոնական կապերի միջոցով։ Ավելին, իր անգործունեությունը սեփական երկրում քննադատության առարկա չդարձնելու համար նա ջանում էր նաև խոչընդոտել կոտորածների վերաբերյալ հասարակայնության իրազեկումը, իսկ եթե դա հնարավոր չէր, ապա այդ լուրերը որակել որպես չափազանցված և անգլիական ապարդիկ կարվության արգասիք¹²։

Չնայած 1896-ի սկզբին Գերմանիայում որոշ կիբլանդյա եկեղեցական պարբերականներ սկսել էին հայկական կոտորածների վերաբերյալ Կոնգրեսի անգործունեությունը քննադատել անգլիական մամուլից¹³, նաև առանձին շրջաններում ձեռնարկվել էր նյութական հանգանակությունների կազմակերպում հայ Կոնգրեսի օգտին¹⁴, այնուհանդերձ գերմանական զանգվածային լրատվությունը նույնպես, հետևելով կառավարության քաղաքականությանը, բավարարվում էր միայն պաշտոնական կցկտուր Կոնգրեսի հրապարակմամբ և թուրքական լրատվության արտաբերմամբ՝ առավել սպեղծելով թյուրմեթոմներ, քան լուսաբանելով կարգավածը և այդ կերպ, ինքնուրույն, դառնալով ոչ միայն Գերմանիայի պետական շրջանների, այլև Թուրքիայի ձայնավորը։ Ավելին, Գերմանիայի զանգ-

12 Նաթ Է. Լեյ, որ երապական բոլոր մեծ պետությունները բավականաչափ իրազեկ էին Նախապետության կարգավոր ոճրագործություններին։ Դա էր վկայում դեռ 1896 թ. փետրվարին Բ. Դոանը ներկայացված՝ «Այն մեծ պետությունների դեսպանների համարեղ նոտան», որտեղ կար ծավալուն վիճակագրական տեղեկատվություն 1895-ին տեղի ունեցած ջարդերի վերաբերյալ։ Չնայած դրան նրանք ազդու միջամտություններ կատարելու դիտարկություն հանդես չէին բերում։ Նման թողությունը նպաստավոր հող էր ստեղծում թուրքական քաղաքականության գործունեության համար, որոնք փորձում էին խոչընդոտել իրադարձությունների հրապարակայնացումը և ապակողմնորոշել միջազգային հանրությանը՝ կարգավածը ներկայացնելով որպես հայ հեղափոխականների «ծրագրված ապստամբության» կանխման միջոցառում։ Ի դեպ, չնայած վերոնշյալ տվյալները միայն մասնակիորեն էին արտացոլում իրականությունը, բայց և այնպես լիովին բավական էին իրադարձությունների պարկերը պարզ դարձնելու համար։ Ըստ այդ տեղեկագրի՝ 1895 -ին կոտորածներին զոհ էին գնացել 88243 հայեր, ավերվել ու թալանվել էին 2493 գյուղեր և 568 եկեղեցիներ, բոնի մահմեդականացվել էին 646 գյուղեր, իսկ 328 քրիստոնեական եկեղեցիներ վերածվել էին մզկիթների։ Նախորդվում էր նաև 12 բարձրաստիճան հայ հոգևորականների և 179 քահանաների ու քաղաքիչների եղբայրական սպանության մասին։ Վիճակագրության համաձայն՝ անօթեանների և օգնության կարիք ունեցողների քանակությունը կազմում էր 546 հազար։ Տե՛ս **J. Lepsius**, *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland*, Berlin, 1896, էջ 243։

13 Տե՛ս **R. Schäfer**, *Geschichte der Deutschen Orient-Mission*, Potsdam, 1932, էջ 6։

14 Նախապետության կազմակերպման առաջին նախաձեռնություններն էլ հայտնական Նախապետության շարժման և Ավերաբանական միության կողմից, որոնցից առաջինը մի նոր պիեթիստական հոսանք էր, որը, ի պարբերություն երկրամասային եկեղեցիների, պաշտպանում էր Աստվածաշնչյան հավատի հիման վրա պարբերաբար ավերաբանականացման գաղափարը, իսկ երկրորդը բողոքական քրիստոնյաների՝ Անգլիկանոս սկզբնավորված մի միություն էր, որտեղ միավորվել էին նաև ազատ եկեղեցիներն ու աղանդները։ Տե՛ս **M. R. Lepsius**, *Die Nachkommen von Richard und Elisabeth Lepsius*, Weinheim, 1984, էջ 121։ Նախապետության շարժման ներկայացուցիչ, հետագայում Նախապետի օգնության գերմանական միության Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ պատրո Էռնստ Լոնմանը 1896 -ի փետրվարի 2-ին, և Գերմանական ավերաբանական միության նախագահ՝ հետագայում ԳԱԱ-ի փոփոխական Անդրեաս Ֆոն Բեռնշտորֆը՝ մարտին, հանդես եկան հայ ժողովրդին օգնելու կոչելով, որոնցից առաջինին հետևող հանգանակությունների արդյունքը՝ 14.000 մարկ, ուղարկվեց Կ. Պոլսի ամերիկյան միսիոներական ընկերությանը, իսկ երկրորդի եկամտի հիմնական մասը՝ 10.000 մարկ, իր նպատակին ծառայելուց Լեփսիուսի միջոցով։ Տե՛ս **U. Feigl**, *Լեյ. աշխ.*, էջ 71-72։ Նման. **J. Lepsius**, *Graf Andreas von Bernstorff, „Der Christliche Orient“*, 1907, էջ 65։

վածային մամուլն իր հերթին անգլիական աղբյուրների փոփոխությունները բնութագրում էր որպես «անգլիական կեղծիք»՝ պնդելով, որ չէր կարելի աջակցություն ցուցաբերել բարեկամ կառավարության «ներքին թշնամիներին», և որ հայերին օգնել՝ կնշանակեր աջակցել անգլիական քաղաքականության «մեքենայություններին»¹⁵: «Գերմանական պահպանողական մամուլը կարծում էր, թե կառավարությանը ծառայություն է մատուցում, եթե հանդես է գալիս հայերի դեմ՝ պաշտպանելով սուլթանի կուսակցությանը», - գրում էր այդ առթիվ դր. Յոհաննես Լեփսիուսը¹⁶:

Ինքնին հասկանալի է, որ այս պարագային գերմանական հասարակայնության իրագրվումը, ինչը կարևոր նախադրյալ էր հայերին մեծածավալ օգնություն կազմակերպելու նաև կառավարությանն ի նպաստ հայերի ակտիվ քայլերի մղելու համար, հնարավոր էր միայն սևփական փոփոխության միջոցով, որի արժանահավաստությունը ոչ ոք չէր կարող կասկածի ենթարկել: Ըստ այդմ՝ անհրաժեշտ էր, որ որևէ մեկը մեկնեի Թուրքիա և անձամբ ուսումնասիրեր այնպիսի կարավածք: Նախախնամության կամքով այդ առաքելությունը պետք է վիճակվեր Ֆրիդրիխ Ֆրիդրիխ Գրեգորիուսի ավերարանական ծխական համայնքի քահանա դր. Յոհաննես Լեփսիուսին:

Դեռ 1895 թ. սեպտեմբերի 29-ին Լեփսիուսը Ֆրիդրիխ Գրեգորիուսին մի շարք բարեկամների հետ հիմնադրել էր «Գերմանական առաքելություն Արևելքում» (ԳԱԱ) կազմակերպությունը, որի խնդիրը պետք է լիներ Արևելքի մահմեդական շրջաններում ավերարանական քարոզչության իրականացումը¹⁷: Երբ, սակայն, շուրջով հայկական ջարդերի վերաբերյալ լուրերը Ֆրիդրիխ թափանցեցին, ընկերության սկզբնական ծրագիրը դարձավ երկրորդական, և առաջնահերթ նպատակ համարվեց հալածանքների ենթարկվող հայ ժողովրդին օգնության կազմակերպումը: «Կարելի էր ճակատագրի ցուցումը համարել, - նշում էր այդ առթիվ Յոհ. Լեփսիուսը, - որ «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության հիմնադրման հաջորդ օրը՝ սեպտեմբերի 30-ին, մեզ համար միանգամայն անակնկալ կերպով Ա. Պոլսում սկսվեցին հայերի կոտորածները, որոնց հաջորդեցին նոր ջարդեր: Դրանց հրահրողը անձամբ Արդու Նամիդ II-ն էր: 1895 և 1896 թվականներին նրա նախաձեռնությամբ էին դուրս գալիս քրիստոնյաների կոտորածներն սկսելու վերաբերյալ հրամանները, որոնք աննկարագրելի ցատում առաջ բերեցին ողջ Եւրոպայի և Ամերիկայի քրիստոնյաների մեջ: ԳԱԱ ծրագիրը, որ սկզբնապես վերաբերում էր մահմեդականների շրջանում քարոզչության կազմակերպմանը, փաստերի պրամաբանությամբ կանգնեց մի այլ առաջադրանքի առջև՝ օգնության կազմակերպում հարյուր-հազարավոր մոթաված հայերի այրիներին և որբերին»¹⁸:

Ա. Պոլսի եղերական իրադարձությունները միայն նախերգանքն էին այն մեծ զանգվածային սպանդի, որն այնուհետև շարունակվեց մյուս հայաշատ բնակավայրերում: Իրադ-

15 J. Lepsius, 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 130:

16 Անդ: «Այն, ինչ Ա. Պոլսի դեսպանությունում և Բեռլինի ԱԳՆ-ում գիտեին, - նշում էր Լեփսիուսը նույն հրապարակման մեջ, - գերմանական հասարակայնությունը դեռ երկար ժամանակ չգիտեր: ... Դիվանագետներին ճշմարտությունը հասելի չէր: Թուրքիայի մամուլ գործակալությունները փնտրեցին աշխատում էին ճշմարտությունը կոծկել, և «հայկական հեղափոխության» հեքիաթն ըստ հնարավորին շահարկվում էր»: Անդ:

17 Տե՛ս R. Schäfer, Geschichte..., էջ 3:

18 J. Lepsius, 30 Jahre ..., էջ 111:

րությունը նորաստեղծ ընկերությունից պահանջում էր ժամ առաջ ձեռնամուխ լինել օգնության կազմակերպմանը. մի առաջադրանք, որի իրականացման համար, սակայն, Գերմանիայում դեռ բավարար նախադրյալներ չկային, քանի որ հասարակական կարծիքը դեռևս համոզիչ կերպով տեղեկացված չէր:

Յոհ. Լեփսիուսի համար կասկածի ենթակա չէր, որ ցանկացած կազմակերպված հայանպասք գործունեություն կհարուցեր Գերմանիայի զանգվածային լրատվամիջոցների թշնամանքն և կդարապարարվեր ձախողման, եթե դրա համար համոզիչ տեղեկատվությամբ հող չհախապարարասարվեր: Ավելին, նա քաջ գիտակցում էր, որ եթե որևէ հայանպասք շարժում հենվեր միայն լրագրային աղմուկի, այլ ոչ թե իրադարձությունների փաստացի ներկայացման, «թուրքական կառավարության մեղավորության» ու «հալածվող քրիստոնյա ազգաբնակչության անմեղության հիմնավորման» վրա, ապա գերմանական կառավարությունն իր թուրքամետ քաղաքականության հիման վրա ոչ միայն իրավունք, այլև պարտականություն կհամարեր ճնշել այդ շարժումը, իսկ եկեղեցական իշխանությունների հետ համագործակցելու մասին խոսք անգամ լինել չէր կարող¹⁹: Նշված խոչընդոտների և օտար աղբյուրների հանդեպ Գերմանիայում տիրող թերահավատության բարդության հաղթահարման առնչությամբ գերմանական Նախկին շարժման ղեկավարների հետ մի շարք խորհրդակցություններ անցկացնելուց հետո (Լեփսիուսը նրանց հետ սերպ հարաբերությունների մեջ էր) Լեփսիուսը վճռեց անձամբ մեկնել Թուրքիա, պարզել իրադարձությունների ենթատեքստը և հաղորդել սեփական հետազոտությամբ ճշգրտված տեղեկություններ, որոնք որևէ թերահավատության չէին կարող ծնել: «Քանի որ, - նշում էր նա, - ես այն նույն օրերին, երբ Թուրքիայում տեղի էին ունենում քրիստոնյաների հալածանքները, հիմնադրել էի «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը, իմ պարտականությունն էր դառնում ներմուծել այդ վիճի մեջ»²⁰:

Ճանապարհորդությունը Լեփսիուսի համար պետք է դառնար նաև հայ ժողովրդի հետ անձնական ծանոթություն հաստատելու՝ առաջին հնարավորությունը, քանի որ, չնայած Երուսաղեմում աշխատելու տարիներին նա եղել էր Սիրիայում, Եգիպտոսում ու Կ. Պոլսում և որոշակի ճանաչողություն ձեռք բերել Արևելքի վերաբերյալ, նաև գործնականում ծանոթացել միսիոներական աշխատանքի առանձնահատկություններին, այնուամենայնիվ ԳԱԱ հիմնադրման նախօրեին նա հայկական շրջանների հետ անձնապես դեռ կայուն շփումներ չուներ: Ժնևի գերմանական համայնքի քահանա պատրոք Նոֆմանի միջոցով նա ծանոթացել էր նրա աներորդու՝ պրոֆ. Կարապետ Թումայանի և պատրոք Վ. Ֆաբերի միջոցով՝ Ջեյմս Գրինֆիլդի հետ, որն այն ժամանակ ուսանում էր Բեռլինում²¹: Այդքանով սահմանափակվում էին նրա անձնական փոխառնությունները հայերի հետ:

1896 թ. մայիսին Յոհ. Լեփսիուսը Ջ. Գրինֆիլդի հետ միասին, որը տիրապետում էր գերմաներենին և մի շարք արևելյան լեզուների, մեկնեց Կ. Պոլիս: Քանի որ նա Ֆրիդրիխում ուներ մի սեփական գորգագործական ֆաբրիկա, Ճանապարհորդության համար

19 Տե՛ս անդ, էջ 131:

20 Անդ:

21 Ջ. Գրինֆիլդը մոր կողմից հայ էր:

արտաքուստ պարզվակ էին գորգի արդյունագործության խնդիրները²²: Բնական է, Թուրքիայի գորգարդյունաբերության կենտրոնները հիմնականում նույնանուն էին այն շրջանների հետ, որտեղ կարարվել էին ամենաեղերական իրադարձությունները, և գորգարդյունաբերության ղեկավարի համար շատ ավելի դյուրին էր մուտք գործել այնտեղ, քան քահանայի, որի ճանապարհին կարող էին խոչընդոտներ հարուցվել: Այսպես թե այնպես, նրանք չկարողացան խուսափել խոչընդոտներից՝ ճանապարհորդության ընթացքում մշտապես զգալով ռստիկանության, զինվորականների և լրտեսների հսկողությունը: Նախ մեկնեցին Կ. Պոլիս, որտեղ հանդիպեցին գերմանական դեսպանության ներկայացուցիչների հետ: Այնուհետև Անկարա, որտեղից նպարակ ունեին հասնել Զեյթուն: Սակայն այդպես էլ չկարողացան մուտք գործել այնտեղ: Թուրքիայի կառավարությունն արգելեց նրանց ճանապարհը դեպի արևելք: Կեսարիայում նրանք հարկադրված փոխեցին իրենց ուղղությունը, մեկնեցին դեպի հարավ և Կիլիկիայի դարպասներով իջնելով կիլիկյան հարթավայր և Ադանա ու Տարսուս այցելելուց հետո վերադարձան Կ. Պոլիս²³:

Ճանապարհորդները շարունակ հանդիպում էին մարդկանց, որոնք ականաբար էին եղել կոտորածներին, և նրանց միջոցով ամբողջացնում իրենց պեղեկությունները: «Մի երկրում, - նշում էր այդ առթիվ Յոհ. Լեփսիուսը, - որտեղ թերթեր չկան, անձնական շփումներն իմացարժան ամեն բանի ամենավստահելի աղբյուրն են»²⁴: Նրանք հնարավորություն են ունենում ծանոթանալու նաև Թուրքիայում գործող ամերիկացի միսիոներների մոտ գրնվող մեծաքանակ փաստաթղթերին, որտեղ եղությունները փաստացի ներկայացված էին: Վերջիններս նրանց պարմում են նաև իրենց ապրածն ու փեսածը²⁵:

Իր պալավորությունները Լեփսիուսը հերազայում ամբողջացնում էր հերեյալ կերպ. «Մենք կարողանում էինք ամենուրեք քրիստոնյաներից և մուսուլմաններից պեղեկություններ քաղել րեղի ունեցած կոտորածների սոսկալի մանրամասների մասին և շարունակ հասարակված րեսանք այն փաստը, որ ոչ մի րեղ հայերի կողմից ապստամբություն կամ սադրանք րեղի չի ունեցել, այլ ջարդերի ողջ պարասխանալությունը ծանրանում է բացառապես թուրքական իշխանությունների վարչական միջոցառումների վրա»²⁶:

Ճանապարհորդությունը ձեռնարկելուց առաջ Լեփսիուսն այդ մասին րեղեկացրել էր գերմանական ավերարանական շարժման մի քանի ղեկավարների, և Ավերարանական միության նախագահ իշխան Անդրեաս Ֆոն Բեռնշտրոֆը նրան րրամադրել էր 10.000 գերմանական մարկ րուժածներին օգնություն ցուցաբերելու և առաջին որբերին հավաքագրելու համար²⁷: Այդ գումարն իր նպարակին ծառայեց Թալասում (Կեսարիայի մոտ) և Ուռհայում, որտեղ Լեփսիուսն իր խնամառության րակ վերցրեց ընդհանուր թվով 100 հայ որբերի²⁸:

Այսպիսով, Լեփսիուսի վեցշաբաթյա ճանապարհորդության ընթացքում հիմնվեցին

22 R. Schäfer, Geschichte..., էջ 5:

23 Տե՛ս անդ: Նմմր. J. Lepsius, 30 Jahre ..., էջ 132-133:

24 Անդ, էջ 133:

25 Տե՛ս անդ:

26 R. Schäfer, Geschichte... էջ 5:

27 J. Lepsius, 30 Jahre ..., 1925, էջ 133:

28 Անդ:

«Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության առաջին երկու որբանոցները: Միաժամանակ առկա էր նաև Նայասպանում արևելյան ունեցած ողբերգական իրադարձությունների սպույզ պարկերը, որին անհրաժեշտ էր հաղորդակից դարձնել գերմանական լայն հասարակայնությանը: Դա դժվարին և կարեւոր մի խնդիր էր, առանց որի լուծման անհնար կլիներ հասարակական շրջաններում հայ որբերի և այրիների համար «համակրանք շահել» և հայթայթել բավականաչափ նյութական միջոցներ: Նույնիսկ սպույզ և հիմնավորված լրատվության պարագային իրադրությունը այդպիսի աշխատանքների կազմակերպման համար աննպաստ էր: Գերմանիայի արարաքին քաղաքական գերադասությունների համար խիստ անհաճ էր արևելյան ունեցած իրադարձությունների մասին բարձրաձայն խոսելը: Արևելքում Գերմանիայի արարաքին քաղաքականության հարցում առաջնային դեր ունեին նրա շահերը, և Թուրքիայի իրականության ճշգրիտ խնայողությունը կարող էր այդ փեսակերից ունենալ խանգարիչ նշանակություն: Այն շրջանները, որոնք առաջնորդվում էին այդ ելակերպով, մեծ դժգոհություն էին փածում ցանկացած հայանպաստ գործունեության հանդեպ, և, բնականաբար, նրանցից հնարավոր չէր հուսալ որևէ աջակցություն: Զանգվածային մամուլից ևս օգնության ակնկալիքներ ունենալ հնարավոր չէր:

Լեփսիուսին մտաբանում էր նաև այն հանգամանքը, որ հայանպաստ լրատվության հրապարակման պարագային թուրքական կառավարությունն իր հերթին կձգար վիժեցնել հայերին օգնություն ցուցաբերելով ԳԱԱ ծրագրերը: «Ինչպե՞ս պետք է հնարավոր դառնար շահագրգռություն արթնացնել Արևելքում գերմանական աշխատանքի կազմակերպման հարցում, - նշում էր նա, - ինչպե՞ս կարող էր գործը կյանքի կոչվել, երբ փարակույս իսկ չկար, որ նույնիսկ միայն Նայասպանում արևելյան ունեցող իրադարձությունների փաստացի հրապարակումը ոչ միայն փոթորիկ կառաջացներ, որն այնուհետև հեշտությամբ չէր հանդարտվի, այլև մեզ հակասությունների մեջ կդներ գերմանական քաղաքականության հեպ (որն, ըստ իրադրության, միայն թուրքամեպ կարող էր լինել) և առավել ևս թուրքական կառավարության հեպ, որի բարյացակամությանը պետք է ապավինի թուրքական կայսրության փրկածքում յուրաքանչյուր բարեգործական գործունեություն»²⁹:

Իրադրությունը ծանր էր, և Լեփսիուսը, իր իսկ խոստովանությամբ, որոշ ժամանակ գտնվում էր հոգեբանական երկվության մեջ՝ վարանելով անմիջապես ներվել «խաչածեղ կրակի փակ»: Կամ պետք էր հրաժարվել հասարակական ուշադրությունը Նայասպանի վրա բեկեռելու ծրագրից, որի դեպքում օգնության գործը ցանկալի ծավալներով չէր կարող իրագործվել, կամ պարզապես լինել, որ այն, իրեն և իր բարեկամներին հակասության մեջ դնելով գերմանական իշխանությունների հեպ, կվիժեցվեր: Այդ երկընդրանքից դուրս գալու համար նրան անփոխարինելի ծառայություն մատուցեց «Die Christliche Welt» ամսագրի խմբագրի՝ դր. Մարտին Ռադեի հոգվածներից մեկը, որպես հեղինակը պիեթիստական շրջաններին, որոնք կամենում էին բավարարվել հայությանը միայն թույլ և սահմանափակ չափերի օգնություն ցուցաբերելով, կշարմբում էր, որ նրանց պակասում է ճշմարտությունը հրապարակայնորեն իրազեկելու քաջությունը³⁰: Ռադեի հրապարակումը Լեփսիուսին օգնեց մեկընդմիջ փառաբանել իր երկվությունը: Եւ այնուամենայնիվ նա վճռեց իր փրկե-

29 J. Lepsius, *Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit*, „Der Christliche Orient“, 1900, էջ 4:

30 Տե՛ս անդ:

կույրություններն անմիջապես չհրապարակել, այլ ուղարկել միայն մերձավորագույն շրջաններին՝ պահպանելով գաղարկությունը, ինչն անշուշտ խորապես կշռադարձված էր: «Նախքան նոր շրջանների մերձենալը կամ օրաթերթերի հետ կապ հաստատելը,- նշում էր Ռ. Շեֆերը,- հարկավոր էր բացառել թուրքամեր շրջանների հակագործողությունների հնարավորությունները և իրագրել ու գրավել մի շարք հեղինակավոր անձանց, որոնք օգնության աշխատանքներին հենարան կդառնային և կկարողանային հասարակայնության առջև ներկայացուցական դեր խաղալ»³¹:

Օգնության գործն արդյունավետ վարելու համար նախ հարկավոր էր այն դնել կազմակերպական հիմքերի վրա: Ուստի Լեփսիուսը Թուրքիայից վերադառնալուց հետո պատարար է. Լոնդանին առաջարկեց մի շարք բարեկամների հրավիրել Ֆրանկֆուրտ և սպանձնել հիմնվելիք՝ Նայաստանի օգնության գերմանական միության (այսուհետ՝ ՆՕԳՄ) նախագահությունը³²: Միությունը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ 1896 թ. հուլիսի 2-ին Մայնի Ֆրանկֆուրտում, կազմավորվեց երկու Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեների հիմքի վրա³³: Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ ընտրվեց Է. Լոնդանը, իսկ կենտրոնական՝ Բեռլինի կոմիտեի նախագահ՝ Ա. Ֆոն Բեռնշտրոմը: Լեփսիուսն իր ցանկության համաձայն դարձավ Բեռլինի կոմիտեի քարտուղարը՝ այդ պաշտոնում հետագայում ծխական համայնքներում, հանրակրթական և եկեղեցական համաժողովներում օգնության աշխատանքների հետ կապված խնդիրներ ներկայացնելու նպատակով³⁴: Բեռլինի կոմիտեի կազմում էին ընդգրկվել նաև այնպիսի ազդեցիկ եկեղեցականներ, ինչպես, օրինակ, դր. Բերմանը, պատարար դր. Ֆոն Բոդենշվինգը, պրոֆ. դր. Կրեմերը, «Der Reichsbote» պարբերականի գլխավոր խմբագիր պատարար Էնգելը, «Die Christliche Welt»-ի հրապարակիչ պրոֆ. դր. Մ. Ռադեն և ուրիշներ:

Այդ ժողովում, մինչև հետագա քայլերի ձեռնարկումը, վճռվեց հրապարակել Լեփսիուսի տեղեկագիրը և սպասել արձագանքներին: Նոգվածը՝ «Ճշմարտությունը Նայաստանի վերաբերյալ» վերնագրով, լույս տեսավ 1896 թ. օգոստոսին Բեռլինի «Der Reichsbote» օրաթերթում³⁵: Նա այդ պարբերականում օգոստոսի 12-ից 27-ը ընկած ժամանակամիջոցում հրապարակեց բազմաթիվ այլ հոդվածներ ևս, որոնք օգոստոսի վերջին լույս տեսան նաև առանձին գրքով՝ «Նայաստանը և Եւրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» վերնագրով³⁶: Այդպիսով գերմանացի քրիստոնյաների մի զգալի հարված իրագրել դարձավ Արևմտյան Նայաստանում կատարված իրողություններին, և եկեղեցական շրջաններում ծայր առան հուզումներ³⁷: Գիրքը, որ շուտով հայտնվեց բազմաթիվ գրախանութներում, հետագայում ունեցավ վեց նոր հրապարակություն, թարգմանվեց անգլերեն ու ֆրանսերեն և մեծ դեր խաղաց առհասարակ եւրոպական հասարակայնությանն իրագրելու գործում, ավելի ընդգրկուն էր ներկայացնում կոտորած-

31 R. Schäfer R., Geschichte..., էջ 8-9:

32 J. Lepsius, Der Herausgeber ..., էջ 5:

33 R. Schäfer., Geschichte..., էջ 9:

34 Տե՛ս անդ, էջ 9:

35 Տե՛ս անդ:

36 Տե՛ս J. Lepsius, Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896.

37 Տե՛ս R. Schäfer, Geschichte... էջ 9:

ների ընդհանուր պատկերը: Փաստական և թվական տվյալների կողքին այնպիսի ներկայացված էին նաև ականաբանների վկայություններ՝ սոսկալի մանրամասներով³⁸:

Ուշագրավ է, որ երբ սկսվեցին Ա. Պոլսի նոր հայկական կոտորածները (1896 թ. օգոստոսին), Լեփսիոսի հրապարակումներն արդեն իրենց «գործը» կատարել էին, և երբ 1896 թ. Գերմանիայում նյութեր տպագրվեցին Ա. Պոլսի Բանկ օրոմանի վրա հայ հեղափոխականների կատարած հարձակման մասին, դրանք գրեթե ազդեցություն չգործեցին: «Եթե հենց 1896 թ. օգոստոս-սեպտեմբերին հասարակությունը Լեփսիոսի գրքով իրագրված չլիներ, - գրում էր այդ առթիվ Ռ. Շեֆերը, - ապա այդ հեղափոխական միջադեպը կարող էր ամբողջովին մարել հայ ժողովրդի հանդեպ համակրանքը: Մինչդեռ տվյալ դեպքում հակառակը տեղի ունեցավ. դժբախտ ժողովրդի բարեկամների թիվը բազմացավ. Գերմանիայի ավերարանական եկեղեցին, նույնիսկ պաշտոնական եկեղեցական մարմինները, ինչպես և պրոսական գլխավոր սինոդն ու գավառային սինոդները միացան՝ կատարելով համապետական հայտարարություններ, չնայած պաշտոնական մամուլն իր բոլոր ուժերով ծառանում էր հայանպասք շարժման դեմ»³⁹:

Լեփսիոսի հրապարակումների միջոցով փաստորեն գերմանական հասարակական և եկեղեցական շրջաններում տեղի ունեցավ պրամագրությունների կտրուկ բեկում ի նպաստ հայերի:

Օգնության կազմակերպման առաջին նախադրյալներն այդպիսով արդեն առկա էին, և ՆՕԳՄ-ի՝ 1896 թ. օգոստոսի 28-ին Ֆրանկֆուրտում կայացած նիստում վճռվեց բոլոր հնարավոր միջոցներով սկսել լայնածավալ քարոզարշավ և հանգանակությունների կազմակերպում: Կազմակերպության հայանվեր գործունեությունը պետք է ծավալվեր ըստ հետևյալ հիմնարար սկզբունքների, որոնք ամրագրվեցին ՆՕԳՄ չորրորդ համաժողովում⁴⁰:

«1. Եթե մենք կամենում ենք արդյունավետ պայքարել Նայաստանում տիրող բաղձի և գրկանքների դեմ, նախ պետք է պահանջենք, որ վերջապես դադարեն հայերի հանդեպ կիրառվող հալածանքները, և այն գավառներում, ուր տեղի են ունեցել կոտորածներ, ստեղծվի խաղաղ իրադրություն: Եթե մենք այդ հարցում արդյունքի չհասնենք, մեր աշխատանքը կդառնա դանախան աշխատանք:

2. Մեր գործունեության ընթացքում պետք է առաջնորդվենք այն սկզբունքով, որ աշխատանք և աշխատասեր, սակայն այսօր ընկճված հայ ժողովրդին ընձեռենք ինքնօգնության հնարավորություններ:

3. Նկրտապես, մեր ջանքերը սկզբունքորեն պետք է նպատակաուղղված լինեն ոչ թե առանձին քառապալկների, այսինքն՝ առանձին որբերի վիճակը բարելավելուն, այլ պետք է

38 Գրքում գերակշռված էր նաև վեց մեծ տերությունների դեսպանների վերոհիշյալ տեղեկագիրը, որը, հակառակ այն գաղտնի պահելու՝ կառավարական շրջանների ջանքերին, մի ֆրանսիացի դիվանագետի միջոցով փոխանցվելով հայերի ֆրանսիացի բարեկամ Պիեր Շարմետտին՝ 1896 թ.-ի գարնանը հրապարակվել էր նրա՝ «Martyrologe armenien» աշխատությունում: Լեփսիոսն, այն հայտնաբերելով, թարգմանեց գերմաներեն՝ ներառելով իր աշխատությունում: Տե՛ս J. Lepsius, Armenien und Europa..., էջ 208-243:

39 R. Schäfer, Geschichte..., էջ 10:

40 Բացի Ֆրանկֆուրտի և Բեռլինի՝ կենտրոնական կոմիտեներից, ժողովին մասնակցում էին նաև Նայաստանի շվեյցարացի բարեկամներն ու Կայզերվերթի, Բիլեֆելդի, Վեստֆալիայի, Նեսենի և այլ ենթակոմիտեների ներկայացուցիչներ: Տե՛ս J. Lepsius, Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 91:

օգնության ձեռք մեկնել ողջ ժողովրդին: Զրկանքների դեմ պետք է պայքար ծավալել հենց այն շրջաններում, որտեղ դրանք կան, որպեսզի հին քրիստոնյա ժողովուրդը պահպանվի իր բնօրրանում:

4. Քաղցածներին և անօթևաններին սննդամթերքի, հագուստի և անկողինների բաժանումից բացի անհրաժեշտ է պարտիսաժամ շրջաններում մարդկանց օգնել վերակառուցելու իրենց տները, սերմացու և գործիքներ փրամադրել աշխատելու և եկամուտ ստանալու համար: Օգնությունը պետք է իրականանա և վերահսկվի երոպացիների կողմից:

5. Գերմանական օգնության միությունն ընտրում է հետևյալ ճանապարհը. մի քանի կենտրոնականներ, որտեղ արդեն որբեր են ընդունվել, պետք է զբաղեցնել գերմանական աշխատուժով և վերոնշյալ ակտիվ աշխատանքը նրա միջոցով իրականացնել շրջակա բնակավայրերում:

6. Քանի որ Թուրքիայի սահմանամերձ երկրներում ևս փախստականները գրավում են ծայրահեղ կարիքի և թշվառության մեջ, հետևաբար նրանց ևս պետք է ցուցաբերել օժանդակություն:

7. Օգնությունը պետք է ցուցաբերվի արագ»⁴¹:

Ֆրանկֆուրտում կայացած վերոնշյալ նիստից անմիջապես հետո ՆՕԳՄ ձեռնամուխ եղավ Բեռլինում և այլ քաղաքներում հանրահավաքների կազմակերպմանը, որտեղ կոչ էր արվում օգնություն ցուցաբերել հայերին: Ի նպաստ հայ ժողովրդի ակտիվ դիրքորոշում հանդես բերելու կոչեր էին հղվում նաև կայսերը⁴²: Կայսրարվում էին հանգանակություններ, որոնք, որպես կանոն, ստանում էին սինդիկատների և եկեղեցական մյուս իրավասու մարմինների թույլտվությունը: Ծավալվող հայանպասք քարոզչության ամենաակնառու ձեռքերումներից մեկը դարձավ պրոսական Գերագույն սինդիկատի՝ 1897 թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը, որտեղ Գերմանական ավերարանական եկեղեցու՝ այդ ավագագույն մարմնի կողմից երկրամասային եկեղեցիներին կոչ էր արվում օգնություն ցուցաբերել «դաժանագույն հալածանքների ենթարկված և դեռ շարունակ ենթարկվող՝ Նախապանի քրիստոնյա եղբայրներին..., աղոթել, որ նրանք կարողանան փորձությունը դիմակայել... Նոգ փանել սպանված ծնողների երեխաների համար... և հավաքի ընդհանրության ապացուցմամբ ու գործադրմամբ գորացնել» հայ ժողովրդին⁴³:

Ինչ վերաբերում էր պետական կառույցներին, ապա վերջիններս չափազանց զգայուն էին դարձել հասարակական փրամադրությունների՝ այդ նոր զարգացումների հանդեպ: Նավարությունը մշտապես վերահսկվում էին գաղտնի ոստիկանության և ՆԳ նախարարության աշխատակիցների կողմից և նվագագույն իսկ պարբերակի դեպքում՝ արգելվում⁴⁴:

41 Անդ, էջ 92:

42 U. Feigel, նշվ. աշխ., էջ 76:

43 Ամբողջական կոչը տես R. Schäfer, Geschichte..., էջ 17-18:

44 Տես E. Lohmann, *Nur ein Leben*, Schwerin, 1933, էջ 30: Այն, թե կառավարությունը Լեփսիտի և նրա գործընկերների հայանպասք հասարակական քարոզչության հանդեպ որքան զգայուն էր, կարող էր վկայել հենց իր՝ կայսրուհու վարքագիծը, որը 1896 թ. Բեթելի՝ Բուժքույրերի քրիստոնեական միությանն արգելեց ընթերցել „Der Reichsbote“ օրաթերթը (այն դեպքում, երբ դրանից կարճ ժամանակ անց, 1898 թ. աշնանը, նա իր ամուսնու՝ արևելյան ճանապարհորդության ընթացքում այցելեց նաև Պադեսարինի հայկական որբանոցը): Տես Գ. Գոլցի, P. C. Корхмазян, *Доктор Иоганнес Лепсиус. Страницы Жизни*, см. «Страны и народы ближнего и среднего Востока», т. XII, Ереван, (1985), էջ 117: Այդ պարբերականը, որտեղ, ինչպես նշվեց, Լեփսիտի

Նաճախ իշխանությունների կողմից Կարբեր պարճառաբանություններով արգելվում էին նաև հանգանակությունները⁴⁵: Կազմակերպվում էին մինչև անգամ այլընտրանքային հավաքություններ, որտեղ մտավորականությանը կոչ էր արվում գերծ մնալ հայանպասք միջոցառումներին մասնակցելուց⁴⁶:

Այն, թե Լևիսիոսը և իր բարեկամները քաղաքական ինչպիսի աննպաստ պայմաններում պետք է իրականացնեին իրենց հայանպասք գործունեությունը, կարող են վկայել պրոֆ. Կարապետ Թումայանի հետ կապված իրադարձությունները, որին Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ պատրո Է. Լոնմանը 1896 թ. սեպտեմբերին քարոզչության կազմակերպման նպատակով հրավիրել էր Գերմանիա:⁴⁷ Երբ նա և Լևիսիոսը 1896 թ. սեպտեմբերին Բեռլինում կազմակերպված մի հանրահավաքում կամենում էին ելույթով հանդես գալ, պրոսական ՆԳ նախարարությունը Կ. Թումայանին արգելեց հրապարակային ելույթներ ունենալ, իսկ Լևիսիոսին սպառնաց զրկել հայանպասք գործունեության իրավունքից⁴⁸: Կարճ ժամանակ անց՝ սեպտեմբերի 24-ին, Բեռլինում մի նոր հավաքույթ կազմակերպվեց, որտեղ, ըստ Լևիսիոսի և իր բարեկամների միջև նախապես կայացած պայմանավորվածության, Թումայանը չպետք է ելույթ ունենար, սակայն նրա զեկուցման րեքսուրը, բազմացվելով, պիտի բաժանվեր ներկաներին: Պայմանավորվածությանը նախապես րեդեկացած՝ միջոցառմանը ներկա գրնվող գաղարնի ոսրիկանությունը այդ փաստն օգրագործեց հավաքույթը ցրելու և մի «ուժգին քաղաքական պրորահողմ» բարձրացնելու համար, որն այնուհետև հեշտությամբ չհանդարտվեց: Ժողովի աշխատարններին Թումայանի ներգրավման պարահանարվությունը բարդվեց Յոհ. Լևիսիոսի վրա, և նա հարկադրված էր գործ ունենալ ՆԳ և ԱԳ նախարարությունների հետ: Կարողանալով հիմնավորել իր՝ Գերմանիայի քաղաքականության դեմ չգործելու, այլ միայն հայ րատապալներին օգնություն ցուցաբերելու նպատակները, նա կարողացավ հարթել բարդությունները, թեպետ Թումայանն այնուհետև հարկադրված էր րեղափոխվել Անգլիա⁴⁹:

բազմաթիվ հրապարակումների շարքում լույս էր րեսել նաև նրա «Ճշմարտությունը Նայասրանի մասին» հոդվածը, այն փոքրաթիվ թերթերից էր, որոնք չէին խուսափում բացելիքաց խոսել հայկական կոտորածների մասին:

45 Տե՛ս „Die Christliche Welt“, 1896, էջ 958-959:

46 H. Goltz, *Zwischen Deutschland und Armenien*, „Theologische Literaturzeitung“, 108, 1983, էջ 869:

47 R. Schäfer, *Geschichte...*, էջ 10: Մարզվանի ամերիկյան միսիայի աշխատակից, հայ ավերարանական հովիվ պրոֆ. Կ. Թումայանը երկու րարի առաջ Թուրքիայում հեղափոխական գործունեության մեղադրանքով մահվան էր դարապարտվել, սակայն իր քնույրի՝ պատրո Նոֆմանի (Ժնե) ջանքերով կալանքից ազալվելով՝ երկրից արարալվել էր: Տե՛ս J. Lepsius, *Der Herausgeber ...*, էջ 5:

48 Տե՛ս H. Goltz, *Zwischen...*, էջ 870:

49 Տե՛ս J. Lepsius, *Der Herausgeber ...*, էջ 5: Այդ դեպքի շուրջ հարուցված աղմուկը եզրափակվեց պրոսական պառլամենտում: Պարզամտոր Ադոլֆ Շթյոկերն այնրեղ 1897 թ. փետրվարի 11-ին ներկայացնելով միջադեպը և Թումայանի հանդեպ ցուցաբերված վարքագիծը համարելով անարդարացի՝ ՆԳ նախարար Էրեքհարդ Փոն դեր Ռեկելից պահանջեց հարցի վերաբերյալ պարզաբանում րալ, և վերջինս Թումայանին պարադրված արգելքի համար վկայակոչեց Բ. դոան հետ Գերմանիայի ունեցած բարեկամական փոխհարաբերությունները, որոնք իբրև թե րումվել էին Թումայանի ելույթների պարճառով: Տե՛ս “Thoumajan und die preussische Regierung“, „Der Christliche Orient“, 1897, էջ 188-189: Թումայանը հերագայում Անգլիայում և Շվեյցարիայում շարունակեց հանդես գալ Նայկական հարցին և Նայասրանում րիբող իրադրությանը վերաբերող հրապարակումներով, որոնց զգալի մասը 1905 թ. լույս րեսալ նաև առանձին գրքով: Տե՛ս Կ. Թումայան, Պարմություն Արեւելյան խնդրի և առաջնորդ հայկական հարցի, հ. Ա-Բ., Լոնդոն, 1905:

Լեփսիուսը հեղափոխում դառնությամբ էր հիշում այդ ծանր օրերը⁵⁰: «Նազվադեպ է բարեգործությունը հարկադրված եղել պայքարել այդքան մեծ դժվարությունների դեմ, գրում էր նա: - Չնայած «ուսանելի» չէր, երբ Գերմանիայի բոլոր շրջաններում Նայասարանի օգնության նպարակով կազմակերպվող հավաքություններն ամենուր ոստիկանության խիստ հսկողության տակ էին վերցվում, երբ արգելվում էր բարեկամ դաշինքի դեմ ինչ-որ բան ասել, երբ հավաքությունները խոչընդոտվում կամ լուծարվում էին, իշխանությունների կողմից արգելվում էին հանգանակությունները սովախար ժողովրդի համար, և հանգանակողները ոստիկանական տնային էին ստանում, սակայն, ընդհանուր առմամբ, այդ արարածը միջոցառումներն ունեցան հակառակ ազդեցությունը և հասարակայնության ուշադրությունը միայն ավելի ու ավելի բևեռեցին բարու իրավունքի վրա. հավանաբար տեղ-տեղ նաև ամոթի որոշ զգացողություն առաջացրեցին այն կապակցությամբ, որ Գերմանիայում բարեգործության ազատությունը դեռ պետք է պայքարով ձեռք բերվի»⁵¹:

Ինչու է, Լեփսիուսի «Նայասարանը և Երուսալեմ...» աշխատությունը վճռական նշանակություն ունեցավ հասարակայնության իրազեկման և հայ ժողովրդի բարեկամների մի սերվար զանգված հավաքագրելու հարցում: Նասարակայնության իրազեկման և իր կողմից ծավալվող հայօգնության աշխատանքների զարգացման համար Լեփսիուսը 1897 թ. սկզբին Բեռլինում հիմնեց նաև «Der Christliche Orient» պարբերականը, որտեղ հրապարակվում էին քաղաքական վավերագրեր, ականաբեռների տեղեկագրեր 1895-96 թթ. կոտորածների վերաբերյալ, տեղեկություններ էին հաղորդվում օգնության աշխատանքների ընթացքի մասին, տպագրվում էին այլ բազմազան նյութեր Նայասարանում տեղի ունեցող իրադարձությունների, հարեան երկրներում ապաստանած հայ փախստականության դրության, հայոց պարտության, եկեղեցու, մշակույթի, Նայական հարցի և այլ թեմաների վերաբերյալ⁵²:

Ամսագրում լույս էին տեսնում նաև հայերի՝ անգլիացի և ֆրանսիացի բարեկամների, գործընկերակից Գաղստյունի, Ռենդել Հարիսի, ֆրանսիացի հոգևորական Շարմեստյանի և այլոց հրապարակումները: Այն, ըստ այդմ, նաև փորձում էր միավորել ինչպես գերմանացի, այնպես էլ անգլիացի և ֆրանսիացի հայանպասք գործիչներին և նրանց հայանվեր նա-

50 Յոհ. Լեփսիուսի և նրա կազմակերպության ամբողջական գործունեությանը ծանոթանալու համար տե՛ս Ա. Նայրունի, Յոհանես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002:

51 Տե՛ս „Das Deutsche Hilfswerk für Armenien“, „Der Christliche Orient“, 1897, էջ 326: Բեռլինի ժողովի մասնակիցներից ոմանք դժգոհ էին ստեղծված քաղաքականացված մթնոլորտից, ուստի նպարակահարմար էին գտնում, որ Լեփսիուսը բաժանվեր Ֆրանկֆուրտի կոմիտեից: Ներքևները եղավ այն, որ ՎՕԳՄ երկու Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեները շուտով կազմակերպական առումով միմյանցից բաժանվեցին, և հեղափոխում գործում էին որպես ինքնուրույն կազմակերպություններ, ընդ որում Բեռլինի կոմիտեն 1900 թ. վերադադրեց իր նախկին՝ «Գերմանական առաքելություն Արևելքում» անվանումը: Լեփսիուսը կոմիտեների բաժանման հանգամանքը աշխատանքների արդյունավետության բարձրացման առումով դրականորեն էր արժեքորում: «Երկու կոմիտեների՝ կողք-կողքի ինքնուրույն գործունեությունը նպարակային էր այն առումով, - նշում էր նա, - որ կրկնակի աշխատանքի միջոցով կարելի էր հասնել շահագրգռությունների շարք ավելի մեծ մասշտաբների և դրանք նպարակառողել Նայասարանի կարիքների բավարարմանը: Այդպիսով ես հասել էի իմ մտադրված նպատակին»: J. Lepsius, „Der Herausgeber ...“ էջ 6:

52 Տե՛ս „Das Blutbad von Arabkir“, „Der Christliche Orient“ 1897, էջ 6-17; J. Rendel Harris und Helen B. Harris, *Briefe vom Schauplatz der letzten Massacres in Armenien*, ակն, էջ 302-312; Nachrichten über das Hilfswerk an den Notleidenden in Armenien, ակն, էջ 47-51; H. Fischer, *Das Kloster hl. Thaddäus*, ակն, էջ 510-513; „Die französischen Gelbbücher und die Zustände in der Türkei 1893-197“, ակն, էջ 251-261; „Armenisches Lied“, ակն, էջ 384-385; „Die armenische Frage in den letzten 20 Jahren“, ակն, էջ 481-505 և այլն:

խաձեռնությունները: Պարբերականի էջերում հանդես էին գալիս նաև Լեվիսիոսի կազմակերպության՝ հայոցնության աշխարհաբնություն ներգրավված աշխարհակիցները՝ ամբողջացնելով Նայասարանում կարարված և կարարվող իրադարձությունների լուսաբանումը:

Ինչևէ, Լեվիսիոսի «Նայասարանը և Երոպայան» աշխարհությունը դարձավ համոզիչ սկզբնաղբյուր նաև այն հեղինակների և պարբերականների համար, ովքեր իրենց հրապարակումներում անդրադառնում էին հայկական խնդիրներին: Ինչ վերաբերում է գերմանական քաղաքական պարբերականներին, ապա հայկական խնդրի առումով առավել ակտիվ էին «*Präussische Jahrbücher*» և «*Die Zukunft*» ամսագրերը, որոնք, չնայած մեծ քաղաքական չունեին, սակայն դասվում էին ամենահեղինակավոր պարբերականների շարքում: «*Präussische Jahrbücher*»-ի հրատարակիչ, հայրնի հրապարակախոս Նանս Դելբրյուքը 1896 թ. սկզբին հրապարակեց երկու հոդվածներ, որոնք կրում էին «Քաղաքական երազանքներ» և «Քաղաքական լրջություն» վերնագրերը և մեծ արձագանք գրան Գերմանիայում: Դելբրյուքը հայկական ջարդերի համարեքստում Թուրքիայի մասնապրումն անխուսափելի էր համարում, իսկ բարեփոխումները, նրա կարծիքով, այլևս ավելորդ էին: «Վիվանդ մարդը այժմ վերջապես մեռնում է,- նշում էր նա:- Երկու սերունդների, ավելի քան կես հարյուրամյակի փորձառությունը ցույց տվեց, որ թուրքական պետությունը բարեփոխման ենթակա չէ»⁵³:

Թուրքի դեմ, որպես մարդու, հեղինակը ոչինչ չունեւր ասելու, բայց նա մշակութային Երոպային չէր կարող ձուլվել, իսկ Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների՝ միմյանց հանդեպ պաշտած արելությունն էլ անհնար էր վերացնել: «Եթե նույնիսկ կրակը, որն այս պահին դեռ մոլեգնում է, մի անգամ ևս հնարավոր լինի պարսեղել,- նշում էր Ն. Դելբրյուքը,- ապա միևնույն է, կարճ ժամանակ անց այն դարձյալ կբորբոքվի: Սպանված հազարավոր մարդիկ, մորթված կանայք և երեխաները վրեժ են ճշում»⁵⁴:

Նեղինակի համոզմամբ՝ հայկական կոտորածները ոչ միայն Թուրքիան մասնաբերելու առիթ էին ընձեռում, այլև այդ կերպ ամբողջ Երոպայում մի նոր քաղաքային վերաբաշխում կարող էր արելի ունենալ: Ընդ որում՝ նա այդ վերաբաշխումը հերքելով կերպ էր պատկերացնում. Ռուսաստանը սպանալու էր Փոքր Ասիան և Կոստանդնուպոլիսը: Երոպական Թուրքիան բաժանվելու էր իրեն սահմանակցող պետությունների միջև: Փոխարենը Ավստրո-Նունգարիան Ռուսաստանից սպանալու էր Լեհաստանը, Գերմանիան՝ Լատվիան, Լատվիան և Լիտվան և, բացի այդ, Ֆրանսիայից սպանալու էր Լյուքսեմբուրգը: Գերմանախոս շրջակացիները միանալու էին Դանիային: Անգլիան ձեռք էր բերելու Եգիպտոսը, Իտալիան՝ Տրիպոլիսը, Ֆրանսիան՝ Մարոկոն և Կոնգոն: Սուլթանին մնալու էին միայն Սիրիան, Արաբիան և Միջագետքը⁵⁵:

Դելբրյուքը միաժամանակ անդրադառնում էր հայերի գրկանքներին՝ հիշեցնելով, որ գերմանա-ֆրանսիական պարերազմում վաղուց այդքան մարդիկ չէին սպանվել: Նենվելով Լեվիսիոսի քննադատությունների վրա՝ նա կրքոտ կերպով հանդես էր գալիս ի նպաստ հայերի և միաժամանակ տուր քննադատության էր ենթարկում թուրքական կողմնորոշում ունեցող լրարվամիջոցներին: Նարկանշական է, որ, պահանջելով սուլթանին գահընկեց անել,

53 „*Präussische Jahrbücher*“, Bd. 83, 1896, էջ 1:

54 Անդ:

55 Տե՛ս անդ, էջ 2-11:

Դելբրյուրն, այնուամենայնիվ, կայսերը նախաձեռնությունն ցուցաբերելու կոչ չէր անում: Գերմանական կառավարությունը, ըստ նրա, հանգիստ կերպով պետք է արտահայտեր «իր նողկանքը Կոստանդնուպոլսում գահի վրա բազմած մարդասպանի հանդեպ» և փառապալալ հայերին օգնելու համար հարկացներ դրամական միջոցներ⁵⁶: Դ-ա, նրա համոզմամբ, կնպաստեր նաև Գերմանիայի միջազգային հեղինակության բարձրացմանը և, բացի այդ, գերմանական պետության հանդեպ համակրանք կձևավորեր Արևելքի քրիստոնյաների շրջանում, որոնց պարկանում էր ապագան:

Դելբրյուրն իր «Քաղաքական լրջություն» հոդվածում հղում էր նաև 1921 թ. հույն ապստամբների երգից հետևյալ հարվածը. «Թուրքն այլևս չպետք է մնա ոչ Մոդեայում և ոչ էլ, առհասարակ, աշխարհում: Ե՞րբ պետք է գա այս երգի իրագործման ժամը»⁵⁷:

«Präussische Jahrbücher»-ը հետագայում նույնպես շարունակում էր ի նպաստ հայերի հանդես գալ և քննադատել այլ կողմնորոշում ունեցող կարծիքներն ու պարբերականներին: Նա միաժամանակ այն փեսակներն էր արտահայտում, որ Գերմանիան նույնպես պետք է շահագրգռված լիներ Օսմանյան կայսրության մասնադրման հարցում, քանի որ, ի վերջո, միայն այդ կերպ կարող էր արժեքավոր գաղութներ ձեռք բերել⁵⁸:

«Die Zukunft» պարբերականը, որի հրատարակիչը Մաքսիմիլիան Նարդենն էր, նույնպես 1890-ական թթ. կոտորածների համարեքսպում բավական հաճախ էր անդրադառնում Նայկական հարցին: Այդ ամսագրին ընդհանուր առմամբ վերագրվում էր ռուսամեր և հակաանգլիական դիրքորոշում, իսկ Նարդենն ինքը Բիսմարկի ջերմ երկրպագուն էր⁵⁹: 1895-1896 թթ. անդրադառնալով հայկական խնդիրներին՝ պարբերականը անգլիացի գործիչներից միայն Գլադստոնին էր համարում հայ ժողովրդի անկեղծ և անշահախնդիր բարեկամ, մինչդեռ մյուսները, նրա կարծիքով, հայերին օգտագործում էին որպես միջոց իրենց իշխանությունն ընդլայնելու համար⁶⁰: Պարբերականն այն համոզմունքն էր արտահայտում, որ եւրոպական ժողովուրդներին ղեկավարում էին այնպիսի մարդիկ, որոնք երկյուղում էին նորարարություններից և հստակ վճիռներ կայացնելուց, և որոնց հետաքրքրում էր միայն առևտրական շահը, ուստի հալածվող քրիստոնյաների փրկության նպատակով որևէ ձեռնարկում նրանցից պետք չէր ակնկալել: Ըստ այդմ՝ քրիստոնեական համերաշխության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Եւրոպացի քրիստոնյաներին «Die Zukunft»-ը բնութագրում էր որպես նյութական շահերով առաջնորդվող չարչիներ, որոնք ոչ մի ընդհանրություն չունեին Գալիլեացու հետ: «Նայերի շուրջ առաջացած աղմուկը, առանց արդյունքի հասնելու, հերգիներն կմարի,- գրում էր պարբերականը 1896-ին,- քանի որ ժամանակակից քրիստոնեությանն, ամեն դեպքում մարչելի են հիստորիկ կարեկցական հույզերը, բայց ոչ միասնական ուժգին գայրույթը, որը կմղի կրթության սխրանքների: Ոչ մի երկրում բուրժուազիան երբևէ խաչակրաց արշավանքների ցանկություն չի ունեցել, եթե դրանցից որևէ օգուտ բաղել հնարավոր չէր: Եւ նույնիսկ պարոն Յոհաննես Լեփսխուսը ... իր՝ «Նայասարանը և Եւրոպան» մեղադրագրով չի կարող հրաշքներ գործել...»⁶¹:

56 Անդ, էջ 216-217:

57 Անդ, էջ 223:

58 Տե՛ս «Präussische Jahrbücher», Bd. 87, 1897, էջ 597-599:

59 Տե՛ս U. Feigel, նշվ. աշխ., էջ 46:

60 Տե՛ս «Die Zukunft», Bd. 13, 1895, էջ 153, 156.

61 U. Feigel, նշվ. աշխ., էջ 47:

Պարբերականն, այնուհանդերձ, մինչև իսկ երոթական պետությունների կողմից սեփական շահերի հետապնդման գերակայության պարագայում Թուրքիայի մասնավորապես համարում էր անխուսափելի և այդ հարցում որոշակի դերակատարում էր վերապահում Գերմանիային:

1890-ական թթ. հայկական կոտորածներին լայնորեն անդրադառնում էր նաև քրիստոնեական մամուլը: Գերմանական լուրերականության և լուրերական միասնական շաբթման գլխավոր պարբերականը՝ «Allgemeine Evangelisch-Lutherische Kirchenzeitung»-ը (այսուհետև՝ AELKZ), առաջին անգամ հայկական կոտորածների մասին տեղեկացրեց 1896 թ. հունվարին՝ դրանք անվանելով քրիստոնյաների հալածանքներ: Պարբերականը նշում էր, որ հայերի ինքնաշարժական կազմակերպումը անհրաժեշտ և հասկանալի էր, որ դրանք ոչ մի կապ չունեին հայկական «ապստամբության» մասին թուրքական քաղաքական սաղ-րիչ տեղեկությունների հետ, և որ մեծ պետությունները պետք է հնարավորին չափ արագ միջամտեին⁶²:

Ամբողջ տարվա ընթացքում պարբերականը հոդվածների և այլ հրապարակումների միջոցով մանրամասնորեն տեղեկացնում էր հայկական հարցի և կոտորածների մասին⁶³: Այն նաև հիշեցնում էր Լուրերի հետևյալ երգի մասին՝ դրա բովանդակությունը համարելով արդիական. «Ղահպանիք մեզ, Տեր, քո խոսքով, և պապին ու թուրքերին արգելիք սպանելը»⁶⁴:

Երբ ամիսների ընթացքում որոշակի դարձավ, որ տերությունները հայկական ջարդերը կասեցնելու համար միջամտելու մտադրություն չունեն, բնառապարտություն էր տեսնում նաև նրանց հասցեին, ինչն առանձնապես ուժգնացավ 1896 թ. օգոստոսի կոտորածներից հետո. «Այս երկաթյա եսականության մեջ,- գրում էր պարբերականը,- որը միայն իր սեփական շահն է ճանաչում և հարգում, սուր կերպով ի հայտ է գալիս արդիական աշխարհայեցողության հակադրությունը միջնադարյանի հանդեպ, որն ամեն բան վրանգեց Փրկչի գերեզմանը անհավաստիներից ազատելու համար: Խաղաղությունը աստվածային բան է, և նրա պահպանումը արժանի է մեծ գոհերի: Եթե, սակայն, դա հետապնդվում է միայն գործարքների շահից ելնելով, ինչը ակնհայտորեն տեղի է ունենում հիմա, երբ սոսկալի կոտորածները հենց այդ պարագայով ուշադրության չեն արժանանում, և սպանվածների արյունը գուր կերպով է ապաշխարության կոչում, ապա քրիստոնեությունը, եթե այն դեռ արժանի է այդ անունը կրելուն, պետք է ամբողջ իր դեմքը ծածկի: Մենք պարասխանաբարությունը ոչ մի առանձին պետության չենք վերագրում: Ամենաքիչը Գերմանիան ի վիճակի կլինե՞ր այն սպանվել: Մենք, սակայն, փոխարենը էլ ավելի բարձրաձայն ենք բողոքում մեր ժամանակի դաժան նյութական ոգու դեմ. մենք նրան այլևս չենք կարող ներել»⁶⁵:

Չնայած պարբերականը տարվա ողջ ընթացքում շարունակում էր հանդես գալ հալածվող հայերի օգտին և պետություններին կոչ էր անում միջամտել, այնուհանդերձ 1896 թ. հոկտեմբերից այնտեղ նկատվեց կարծիքների բեկում. մասնավորապես կասկածի էր

62 Տե՛ս AELKZ, 30, 1896, էջ 93:

63 Տե՛ս U. Feigl, նշվ. աշխ., էջ 49:

64 Անդ., էջ 50:

65 AELKZ, 30, 1896, էջ 883: Նման. U. Feigl, նշվ. աշխ., էջ 50:

ենթարկվում հայերի լիակատար անմեղ լինելը⁶⁶։ Առկա էր նաև անհամաձայնություն հայ ժողովրդի գերմանացի բարեկամների, հապկապես ՆՕԳՄ-ի հասարակական-քաղաքական գործելակերպի, նրանց հանրահավաքների և ցույցերի հանդեպ, որոնք, պարբերականի կարծիքով, կարող էին քաղաքական սադրանքների առիթ լինել։ 1897-ից այդ պարբերականն արդեն բավական հազվադեպ էր անդրադառնում հայկական խնդրին։

Քրիստոնեական պահպանողական կուսակցության՝ «Deutsche Evangelische Kirchenzeitung» պարբերականը, որի հրատարակիչը Ադոլֆ Շթյոկերն էր, հայկական թեմապիկային առավել ակտիվորեն սկսեց անդրադառնալ 1896 թ. փետրվարից։ Մի ընդարձակ հոդվածաշարով այն ներկայացնում էր Նայ Առաքելական Եկեղեցու պատմությունն ու առանձնահատկությունները և զուգահեռաբար անդրադարձ էր կատարում նաև հայկական կուրորածներին՝ մեծ տերություններին կոչ անելով միջամտել ի նպաստ հայերի⁶⁷։ Արարահայտելով այն տեսակետը, որ Օսմանյան կայսրության մասնաբաժնի մտադրությունը խնդիր էր, պարբերականը միանգամայն օրինազատի էր համարում, որ, որպես դրա առաջին քայլ, Ռուսաստանը գրավեր Արևմտյան Նայաստանը։ Մեծ տերություններին անդրադառնալիս ավստսանք էր արարահայտում այն առնչությամբ, որ վերջիններս, ջանք չխնայելով՝ ցուցադրելու իրենց մարդասիրական կեցվածքը, գործնականում ոչինչ չէին կամենում ձեռնարկել։ Քննադատության էր ենթարկվում նաև Գերմանիայի հանդուրժողական վարքագիծը։ «Ոչ մի խոսք չի լսվում այն մասին, որ Գերմանիան իր մեծ իշխանությունը Ասորուց ստացել է՝ երկրի վրա արդարությունը պաշտպանելու համար, - գրում էր պարբերականը։ - Ոչ մի կարեկցանք չի արարահայտվում սովին և ցարին մարմնաված, իրենց կերակրողներից զրկված մարդկանց հանդեպ...»⁶⁸։

Նմանապես պահպանողական Էռնստ Վիլհելմ Նենգսպենբերգի կողմից հիմնադրված «Evangelische Kirchenzeitung»-ը նույնպես բավական հանգամանակից էր անդրադառնում հայկական կուրորածներին⁶⁹։ Ոչ մի կասկած չունենալով Լեվիտիսի հրապարակած տեղեկությունների ճշմարտացիության հարցում՝ թերթն այն տեսակետն էր արարահայտում, որ թուրքական կառավարությունը, ինչպես և այդ պետությունն առհասարակ այլևս գոյության իրավունք չունի, և որ անհրաժեշտ էր Թուրքիան մասնաբաժնի։ Դա, այնուհանդերձ, պարբերականն անվանում էր դժվար իրագործելի խնդիր, և առաջին հերթին անհրաժեշտ էր համարում կուրորածների իրականացման պարասխանաբանություններին դարձնել մի միջազգային փորձումալի միջոցով։ Գերմանական կառավարության և պաշտոնական մամուլի հանդուրժողական դիրքորոշման առնչությամբ պարբերականը միայն թուցիկ քննադատություն էր հնչեցնում, իսկ հայերի հանդեպ թուրքական բարբարոսությունները դիտարկում էր առաջին հերթին կրոնական հակամարտության համարվածություն։ «Վերջին շրջանում դարձյալ բրիտ-

66 Տե՛ս անդ։

67 Տե՛ս DEKZ, 1896, էջ 76-121։

68 Ս. Feigel, նշվ. աշխ., էջ 52։ Նարկ է նշել, որ այս թերթի դիրքորոշումն, այնուհանդերձ ուներ որոշ պայմանականություններ և երբեմն նաև փոքր էր փախ թուրքական պաշտոնական տեսակետներից։ Այնուհետ, օրինակ, քննադատություն էր ի հայտ գալիս հայ ժողովրդի՝ առավել ակտիվ հանդես եկող մի շարք բարեկամների, մասնավորապես Լեվիտիսի հասցեին, որը մեղադրվում էր անգլիական ազդեցությունից զերծ չլինելու և իր տեղեկություններում հայկական ապստամբական գործողությունները լռության մարմնելու մեջ։ Անդ։

69 Տե՛ս անդ։

Անդ։

տոնյաների, և այն էլ շարք քրիստոնյաների արյուն է հոսել Նայասպանում»,- նշվում էր, օրինակ, հրապարակումներից մեկում⁷⁰:

Պարբերականում համեմատաբար մեծ տեղ էր հատկացվում նաև Նայ Առաքելական Եկեղեցուն առնչվող հարցերին, և ընդգծվում էր նրա բարենորոգման անհրաժեշտությունը⁷¹:

Ավերարանական միության «Deutsch-Evangelische Blätter» պարբերականը առաջին անգամ հայկական կոտորածներին անդրադարձավ նախ 1896 թ. գարնանը, իսկ ավելի մանրամասն՝ նույն տարվա աշնանը: Նարցով առավել ակտիվ կերպով զբաղվող Վիլյամ Բեյշլագն իր հոդվածներում պնդում էր, որ չէր կարելի հավասար ընծայել թուրքական մամուլին և առհասարակ քարոզչությանը⁷², որ խնդիրը, անկասկած, վերաբերում էր քրիստոնյաների հալածանքներին, և որ մեծ տերությունները վերջապես պետք է հանձնառություններ ստանձնեին Թուրքիայի հանդեպ: «Եթե նույնիսկ Թուրքիայում ոչ բոլոր քրիստոնյաների վրա է միաժամանակ հարձակում ձեռնարկվել,- գրում էր նա,- ապա հայերը հարձակման են ենթարկվել՝ որպես քրիստոնյաներ: մի՞թե կարելի է ասել, թե Ներսիսի հեղափոխումները քրիստոնյաների հեղափոխումներ չէին, քանի որ դրանք միաժամանակ նաև զավաճեցրեցին ապրող քրիստոնյաների հանդեպ չեն ձեռնարկվել: ... Եւ ինչո՞ւ հազարավոր հայեր իրենց կյանքը փրկելու այլ միջոց, քան իսլամն ընդունելն էր, չեն ունեցել»⁷³:

Պարբերականը սուր քննադատությամբ էր անդրադառնում Օսմանյան կայսրության հեղափոխության փառեկամական փոխհարաբերություններին և այն դժգոհությանը, որով իշխանությունները վերաբերում էին հայերի՝ գերմանացի բարեկամների գործողություններին: «Գերմանացի բազմահազար քրիստոնյաները խորապես տրամադրված վրդովմունքով են կանգնած իրենց կառավարության անընդունելի Արևելյան քաղաքականության առաջ. մի քաղաքականության, որը հայկական կոտորածների ընթացքում ինքիմ նվերներ է դնում սուլթանի՝ քրիստոնյաների թարմ արյունից թաց ձեռքերի մեջ և «բարեկամացած պետությանը» շարունակ գերմանացի հրահանգիչներ է տրամադրում մի բանակի կապարելագործման նպատակով, որը հենց նոր օգտագործվել է՝ մեզ հեղափոխական նույն Փրկչի անունը կրող մի ժողովրդի սպանողի համար: Գերմանացի քրիստոնյաները իրավունք չունեն իրենց կառավարության Արևելյան քաղաքականության պարզապես փառաբանելու և գերծ մնալ քրիստոնյայի՝ իրենց պարտքը հնարավորին չափ լավ կատարելու»⁷⁴:

Ավերարանական միությունը դատապարտում էր հայերի տառապանքների հանդեպ անարարներ՝ պաշտոնական և կիսապաշտոնական մամուլի վարքագիծը և մեծապես ողջունում էր հայ ժողովրդի գերմանացի բարեկամների, մասնավորապես՝ դր. Յոհ. Լևիսխուսի գործունեությունը⁷⁵:

70 Անդ:

71 Տե՛ս անդ, էջ 53:

72 Տե՛ս անդ:

73 Անդ:

74 W. Beyschlag, *Lepsius, Deutsch-Evangelische Blätter*, 1896, p. 784.

75 Բեյշլագն, ի դեպ, նույնպես մասնակցել էր հայաստանի հանրահավաքներին, ունկնդրել էր Լևիսխուսին և նրա մասին հայրնում էր հետևյալը. «Ես նրանից անվերապահորեն վստահելի անձնավորության փառավորություն ստացա, որ առաջնորդվում է ոչ միայն ջերմ գզացումով և բարոյական պաթոսով, այլև հստակ լծբոնումով, շրջահայեցությամբ և խոհեմությամբ, որ հեշտությամբ չի պնդում այն, ինչն ինքը լրջորեն չի սպուգել և ճշգրիտ

Թուրքիայում հայերի ապագայով մտախռոված պարբերականը մասնաշաղկապում էր այն հանգամանքը, որ թուրքերը երոպական տարածքներից ներգաղթող իրենց հայրենակիցներին կամենում էին տրամադրել անապոյական տարածքները, և այդ պարագայում այնպեղ քրիստոնյաների համար նեղվածք էր ստեղծվելու: Եթե այդ գործընթացը չկասեցվեր, ապա պարբերականի կարծիքով բոլոր հայերը, թերևս, պետք է ստիպված լինեին արագադաշտել Բուղարիա կամ Ամերիկա⁷⁶:

Պրոֆ. Մարտին Ռադեի կողմից հրատարակվող «Die Christliche Welt»-ը, չնայած համեմատաբար փոքր տպաքանակին, գերմանական բողոքական շրջաններում ամենամեծ հեղինակությունը վայելող պարբերականներից մեկն էր: Այն 1896 թ. սկզբից մշտապես անդրադառնում էր հայկական կոտորածներին՝ վկայակոչելով սկզբնական շրջանում անգլիական սկզբնաղբյուրներ, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև Յոհ. Լեփսիուսի տեղեկությունները, որոնք համարում էր միանգամայն ստույգ: Պարբերականը գերմանացի քրիստոնյաներին կոչ էր անում հանդես գալ ի նպաստ Թուրքիայի՝ իրենց հավատակիցների և տուրք չտալ այն թյուր տեսակետին, թե այդպիսով կպաշտպանեին Անգլիայի շահերը: Մարդկային կարեկցանքը և քրիստոնեական համերաշխությունը, թերթի բնութագրմամբ, շարավառի կարևոր էին, քան քաղաքական շահերը⁷⁷, և նա չէր զրանում ուժգին կերպով քննադատել նաև գերմանական կառավարության անգործունեությունը: «Նայկական ճգնաժամի ժամանակ ոչ մի պետություն ավելի նվազ ազնվաճգություն չի դրսևորել, - գրում էր պարբերականը, - որքան գերմանական կառավարությունն ու գերմանացի ժողովուրդը»⁷⁸:

Գերմանական օրաթերթերը, պարբերականի բնութագրմամբ, եռանդագին կերպով կոծկում և լուրջան էին մատնում Թուրքիայում կատարվող եղերական իրողությունները: Իր էջերը, սակայն, «Die Christliche Welt»-ը ազատորեն հափկացնում էր հայերի գերմանացի բարեկամներին, որոնք այնպեղ հանդես էին գալիս հայանպաստ հրատարակումներով⁷⁹: Թերթը միաժամանակ փորձում էր այն տեսակետը զարգացնել, որ կոտորածների հարցում մեղավորները որոշակի մարդիկ էին, և ճիշտ չէր լինի մեղադրել ամբողջ թուրք ժողովրդին: Այն համոզմունքն էր արտահայտվում, որ Թուրքիան բարեփոխվել չէր կարող: Այն մասին, թե Օսմանյան կայսրությունում տեսականորեն ինչպես պետք է լուծվեր հայերի կյանքի և ունեցվածքի անվտանգության խնդիրը, որևէ հայեցակարգ չէր զարգացվում: Փոխարենը պարբերականը անհրաժեշտ էր համարում սուլթանին և նրա կառավարությունը վերցնել հսկողության ներքո և հայաշար բնակավայրերում էլ ստեղծել քրիստոնյա դիպորդների մի հզոր ցանց⁸⁰:

Նայկական խնդիրներին անդրադառնում էին նաև քրիստոնեական կողմնորոշում ունեցող այլ լրատվամիջոցներ, գործրինակ՝ Գուստավ Վառնեկի կողմից հրատարակ-

սկզբնաղբյուրներով չի կարող ապացուցել»: Անդ, էջ 776-777:

76 Տե՛ս անդ, էջ 782-786:

77 Տե՛ս „Die Christliche Welt“, 1897, էջ 71-72:

78 Անդ, էջ 465:

79 Ս. Feigel, նշվ. աշխ., էջ 55:

80 M. Rade, *Die Politik der europäischen Großmächte, insbesondere des Deutschen Reiches, gegenüber den Armeniern*, „Die Christliche Welt“, 1896, էջ 691: Այդ պարբերականն, ի դեպ, իր հրատարակումներով մեծապես նպաստեց նաև հայերին օգնության կազմակերպման՝ Յոհ., Լեփսիուսի և առհասարակ ՆՕԳՄ նախաձեռնություններին:

վող «Allgemeine Missionszeitschrift», Յուլիուս Ռիխտերի կողմից հրատարակվող՝ «Die Evangelischen Missionen», «Deutsches Protestantenblatt», կաթոլիկական «Historisch-Politische Blätter für das katholische Deutschland» պարբերականները, որոնք, որպես կանոն, հենվում էին դր. Լևիսիուսի «Նայասարանը և Երուսալան...» աշխատության մեջ ամփոփված փնտելությունների վրա:

Բացի մամուլից, Նայկական հարցին անդրադարձ էր կատարվում նաև առանձին հրապարակումների՝ գրքերի և բրոշյուրների միջոցով: Առաջին և ամենաընդգրկուն աշխատությունը Լևիսիուսի՝ «Նայասարանը և Երուսալան. մեղադրագիր քրիստոնյա մեծ փերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» գիրքն էր, որը, ինչպես արդեն նշվեց, նաև կարևորագույն սկզբնաղբյուր էր այլ հրապարակումների համար: Լևիսիուսն իր այդ աշխատության մեջ, հանգամանալից փնտելացնելով հայկական կոտորածների մասին, միաժամանակ սուր քննադատություն էր ուղղում երոսական պերություններին՝ բարոյական նորմերից զերծ, նյութական շահերի հեղափոխ արարքին քաղաքականությանը և նրանց կոչ էր անում «վերաքրիստոնեացնել» իրենց քաղաքականությունը:

Գրքի վերնագիրն իսկ հուշում էր, որ Երուսալան և, մասնավորապես, Գերմանիան առանձնահատուկ պատասխանատվություն էին կրում Թուրքիայում փրկելու ունեցած եղբրական իրադարձությունների համար. ոչ վերջին հաշվով նաև այն պարճառով, որ նրանք էին Նայկական հարցը մեծ քաղաքականության օրակարգ բերել և այնուհետև, չսպարելով այդ հարցի լուծմանը, հայերին դարձրել էին սուլթանական կառավարության վերեփնդության գոհը: «Եթե մեծ փերությունները Նայասարանը թողնեին իր հույսին, - գրում էր Լևիսիուսն այդ առնչությամբ, - հայերն այսօր, անշուշտ, երջանիկ չէին լինի, բայց նաև չէին լինի երկրագնդի ամենադժբախտ ժողովուրդը»⁸¹:

Եթե մեծ պերություններն առաջ են մղել բարեփոխումների հարցը, ապա, ինչպես նշում էր Լևիսիուսը, դա անկասկած արել են իրենց աշխարհաքաղաքական շահերի թելադրանքով, սակայն, նրա համոզմամբ, սխալ և անհիմն էր Գերմանիայում փարածված այն փեսակերը, թե Անգլիան, որպես 1890-ական թթ. բարեփոխումների մասին ամենից ավելի բարձրաճայնող պերությունը, ըստ այդմ, հայկական կոտորածների հարցում ուներ մեղքի առանձնահատուկ մեծ բաժին: Եթե բարեփոխումներն արդեն համաձայնեցվել էին, նշում էր Լևիսիուսը, ապա չէր կարող արգելվել այդ մասին խոսելը: Իսկ ինչ վերաբերում էր այն պնդումներին, թե Անգլիան հայերին զենք է մատակարարել, ապա դրանք հեղինակը համարում է անհիմն:

Լևիսիուսը, ընդհանուր հանդես բերելով բարեփոխումների իրագործման հարցում Գլադստոնի և նրա կառավարության ցուցաբերած ակտիվության հանդեպ, միաժամանակ սուր քննադատություն էր ուղղում գերմանական կառավարության՝ հայկական ջարդերի վերաբերյալ լուծություն պահպանելու քաղաքականությանը, որը «ոճրագործի» հետ իր բարեկամական հարաբերություններից չզրկվելու համար զլանում էր մինչև իսկ համակրանքի ժեստ ցուցաբերել հեղափոխվող հայերի հանդեպ⁸²: Ի վերջո, ինչպես նշում էր Լևիսիուսը,

81 J. Lepsius, Armenien und Europa..., էջ 84:

82 Տե՛ս անդ, էջ 84:

ծայրահեղ, բացարձակ լռության և ռազմական միջամտության միջև կար մի խաղապարածք, ինչը, սակայն, նույնպես Գերմանիայի կողմից երբեմն չօգտագործվեց⁸³:

Լեվսխուսը ոչ արժանավայել էր համարում Գերմանիայի կեցվածքը, որը հավակնում էր դառնալ համաշխարհային տիրություն, և միաժամանակ հերքում էր պաշտոնական Գերմանիայի կողմից շահարկվող այն տեսակետը, թե Թուրքիայի մասնավորապես կարող էր համաշխարհային պատերազմի դրդապատճառ դառնալ: Բոլոր դեպքերում Օսմանյան կայսրությունը, նրա համոզմամբ, տնտեսական փլուզման և երիտթուրքական շարժման ուժեղացման հետևանքով շուրջով հասնելու էր իր վախճանին: Լեվսխուսը դրանում տրեղբակալ ոչինչ չէր տեսնում, և Թուրքիայի մասնավորապես դեպքում համաշխարհային պատերազմի հավանականությունն էլ, նրա կարծիքով, խիստ փոքր էր: Փոխարենը նա ուշադրություն էր հրավիրում թուրքերի և քրդերի անպարտելիության դեպքում հայերին սպառնացող նոր վտանգների վրա՝ ընդգծելով, որ մեծ տիրությունների անգործությունը կբաջալերեր իսլամական և քրդական ֆանատիզմը, ինչն էլ կարող էր հանգեցնել նոր կոտորածների⁸⁴: «Ի՞նչ են, ուրեմն, մեծ տիրությունները մտածում այս հարցում ձեռնարկել՝ ցնծացող իսլամի հանդեպ քրիստոնեության պարսիվ փրկելու համար, - գրում էր նա: - Մենք մեր խնդիրը չենք համարում այդ հարցին պարասխանելը, այլ կոչ ենք ուղղում քրիստոնյա կայսրերի և թագավորների սրբին ու խղճին, որոնք Աստծո կողմից իրենց վստահված սուրը անտեղի չպետք է կրեն և, որպես երկրի վրա աստվածային արդարադատության ներկայացուցիչներ, պարտավոր են հաշվելու լինել այն հարցում, թե արդյոք իրենց դժվարին ծառայության իրագործման ժամանակ երբեմն աչքի առաջ ունեցնել են Աստծո պարսիվ և Քրիստոսի արքայությունը»⁸⁵:

Լեվսխուսն, այսպիսով, ինչպես Գերմանիայից, այնպես էլ մյուս տիրություններից պահանջում էր իրենց արքային թաղաքականությունը կառուցել քրիստոնեական բարոյականության հիմքի վրա, այլ ոչ թե եսակենտրոն նյութական շահերի:

1897-ին հրապարակվեց նաև մեկ այլ արժեքավոր աշխատություն, որի հեղինակը Ժոնեմոմ գործող գերմանացի հոգևորական Ադոլֆ Նոֆմանն էր: Նա «Թուրքական գնդա-նում» խորագիրը կրող իր գրքում անդրադառնում էր մի հայտը, որը կողմից արդեն հիշատակված Կ. Թումայանի ճակատագրին և հակապետական գործունեության մեղադրանքով Թուրքիայում ձերբակալվել ու բանտարկվել էր⁸⁶: Նոֆմանն իր աշխատությամբ նպատակ ուներ եվրոպական հասարակայնության ուշադրությունը հրավիրել ինչպես նրա, այնպես էլ առհասարակ հայ ժողովրդի արեւմտյան հարվածի ծանր դրության վրա: Գրքի հրապարակումից հետո Թումայանի հետ կապված միջադեպը Եւրոպայում զգալի հասարակական հնչեղություն ստացավ, ինչի հետևանքով թուրքական կառավարությունը բանտից ազատեց Թումայանին՝ պայմանով, որ վերջինս առհավեր հեռանար Թուրքիայից:

Նոֆմանն իր գրքում առաջադիմության և մարավոր ներուժի տեսանկյունից հայերին բնութագրում էր որպես Արևելքի ժողովուրդների «պիտերը», որն ունակ էր արեւմտյան մշակույթը ներմուծել Թուրքիա և, որպես այդպիսին, անմրցելի էր: «Նրանք լույսը և առա-

83 Տե՛ս անդ:

84 Տե՛ս անդ, էջ 112-114, 118:

85 Անդ, էջ 121-122:

86 A. Hofmann, *Im türkischen Kerker*, Berlin, 1897:

ջաղիմությունն են մթին և ֆապալիզմի ու ծուլության մեջ ընկղմված թուրքականության հանդեպ»⁸⁷, -գրում էր հեղինակը: Ըստ Նոֆմանի՝ հայերը Եւրոպայի համար անփոխարինելի դերակատարում էին ունենալու նաև Արեւելքը, ներառյալ ողջ Թուրքիան քրիստոնեացնելու հարցում: Չնայած երկրաստորդ հայերի մեջ կային հեղափոխականներ, սակայն, հեղինակի համոզմամբ, նրանց որևէ մեղադրանք չէր կարող ուղղվել, բանի որ նրանք ազապագրական պայքար էին մղում և, ըստ այդմ, անում էին նույնը, ինչ արել են գերմանացի ազապամարտիկները Նապոլեոնի դեմ պայքարում:

Նարկ է հշել, որ ոչ միայն հայանպասք գործիչներն էին զբաղվում հայկական խնդիրների վերաբերյալ հրապարակումներով, այլև պրոթուրքական հրապարակախոսները, որոնց շարքում ամենահիշարժանը, թերևս, Նանս Բարթն էր: Նա 1897-ին հրապարակեց «Թուրք, պաշտպանվիր» գիրքը, որն այնուհետև ունեցավ նաև մի շարք վերահրապարակումներ⁸⁸: Արդեն վերնագիրն է հուշում, թե գիրքն ինչպիսի ուղղվածություն ուներ: Բարթը պնդում էր, որ թուրքերը Եւրոպայում, հարկապես հայերի հաշվին, հանիրավի զրպարությունների էին ենթարկվում, և այդ գործընթացը դեկավարվում էր Անգլիայի կողմից, որը ձգտում էր մասնադել Թուրքիան⁸⁹: Ըստ Բարթի՝ Օսմանյան կայսրությունը գտնվում էր փրկեսական, ընկերային և քաղաքական բարվոք դրության մեջ, և ոչ մի ուրիշ պետություն չկար, որն իր հպարակներին ավելի շար քաղաքական ու կրոնական ազաություններ քրամադեր: Դրանից, հեղինակի պնդմամբ, օգտվում էին նաև հայերը: Մինչդեռ թուրքերը մշակութային և մինչև իսկ «խղալական» ժողովուրդ էին, որին հապուկ էին բարեսրությունը, հանդուրժողականությունը, մերձավորի հանդեպ սերը, ազգերի հավասարության ժողովրդավարական ըմբռնումը և անվերապահ հնազանդումը կառավարությանը⁹⁰:

Բարթը վրդովմունք էր արքահայտում հայերի հանդեպ գերմանական եկեղեցական շրջանների ցուցաբերած կարեկից և ջերմ վերաբերմունքի համար, որոնք, նրա կարծիքով, իրենց այդ «սենտիմենտալ» վարքագծով կամա թե ակամա դառնում էին քրիստականական քաղաքականության շահերի ներկայացուցիչը: Նա հարկապես անգուսպ բարկությամբ էր արքահայտվում Լեփսիուսի մասին՝ նրան անվանելով «թուրքակեր»: Նրա «Նայասքանը և Եւրոպան» աշխատությունը Բարթը ծաղրանքով անվանում էր «լեփսիադ», իսկ այնպեղ հրապարակված՝ հյուպապոսական և այլ ականաքեսների վկայությունները՝ «հնչակների եղբայրների խաբեություններ»⁹¹:

Բարթի գիրքն, իհարկե, եկեղեցական մամուլի հավանությանը չարժանացավ. ավելին, դեռ 1897-ին «Die Zukunft» պարբերականում ծայր առավ նաև սուր բանավեճ Բարթի և Լեփսիուսի միջև, որպեղ եզրափակիչ խոսքը վերապահվեց Լեփսիուսին⁹²:

Գերմանիայի հասարակայնությունն, այսպիսով, Լեփսիուսի հրապարակումների և ՆՕԳՄ կառույցում նրա և իր գործընկերների գործուն քեղեկաքվական միջոցառումների

87 Անդ, էջ 8-9:

88 H. Barth, *Türke wehre dich*, 2. Auflage, Leipzig, 1898:

89 Տեն անդ, էջ 10:

90 Տեն անդ, էջ 19-60, 67, 156, 246 և այլն:

91 Անդ, էջ 14, 54:

92 Տեն H. Barth, „Die Türkenhetze“, in: „Die Zukunft“, Bd. 18, 1897, էջ 130-132; J. Lepsius, *Erwiderung, Die Armenierhetze*, անդ, էջ 218-222 և այլն:

շնորհիվ որոշակիորեն իրազեկվեց Թուրքիայում Կոնստանդնուպոլսի ունեցած եղերական իրադարձությունների վերաբերյալ, և եկեղեցական մամուլն ու քաղաքական որոշ պարբերականներ նաև իրենց համերաշխությունն էին հայտնում Լեվոնիստին ու մյուս հայանպասք գործիչներին:

Ինչ վերաբերում է գերմանական քաղաքական հոսանքներին և հայկական կոտորածների առնչությամբ նրանց արքայազնի դիրքորոշմանը, ապա սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը այդ հարցում, ցավոք, միասնական չէր: Այդ կուսակցության հայտնի գործիչ և ղեկավար Ռոզա Լուքսեմբուրգը վճռականորեն դատապարտում էր հայերի բնաջնջման թուրքական կառավարության քաղաքականությունը⁹³: Ինչպես «հայ հեղափոխականների» խաղաքարտի շահարկումների, այնպես էլ Ղալկական հարցի առնչությամբ նրա դիրքորոշումը միանգամայն հստակ և միանշանակ էր: «Ինչպիսի՞ն կարող է լինել սոցիալ-դեմոկրատիայի դիրքորոշումը Թուրքիայում Կոնստանդնուպոլսի ունեցող իրադարձությունների հանդեպ, - նշում էր նա իր հրապարակումներից մեկում: - Սոցիալ-դեմոկրատիան սկզբունքորեն կանգնած է ազատագրական ձգտումների կողքին: Բրիտանյա ազգերը, Եվրոպա ղեկավարում հայերը ուզում են ազատագրվել թուրքական փրկափայտի լծից, և սոցիալ-դեմոկրատիան պարտավոր է անվերապահորեն հանդես գալ ի պաշտպանություն նրանց»⁹⁴:

Այդօրինակ առողջ և հստակ դիրքորոշում ունեւ նաև կուսակցության մեկ այլ ղեկավար՝ Կարլ Լիբկնիխը, բայց չնայած դրան, կուսակցության ներսում, հարկապես աջ թևում առկա էին փրաճայնություններ: Ինչպես վկայել է կուսակցության գործիչներից Էդուարդ Բեռնշտայնը, որոշ սոցիալ-դեմոկրատներ հակված էին հավաքալու թուրքական այն սպահող Կոնստանդնուպոլսի, թե ժողովրդական գործակալները հայերին դրդել են ապստամբության⁹⁵: Նեղ Ռուսաստանի առաջնորդացումը կանխելու համար, նրանց կարծիքով, անհրաժեշտ էր Թուրքիան «նորակալան ոճի կառավարման միջոցով վերածել մի միասնական կենտրոնական պետության», որն ի վիճակի կլինեւ «սեփական ուրբերի վրա կանգնել»: Թե այդ ղեկավարում ինչպիսին պետք է լինեւ Ղալկաստանի ապագան, Բեռնշտայնը չի հաղորդում, և այնուամենայնիվ նա անձամբ եւս կոչ էր արել միանալ Գերմանիայում հայանպասք շարժմանը՝ հենց նաև հանուն Արեւելքում ազատության, մարդկայնության և առաջադիմության հաղթանակի⁹⁶:

Խաղաղության շարժումը նույնպես ակտիվ կերպով էր արձագանքում Թուրքիայում Կոնստանդնուպոլսի ունեցող եղերական իրադարձություններին: Ինչպես հաղորդում է Ու. Ֆայգելը, 1895 թ. դեկտեմբերին շարժման «Ջենթեր վաճ» պարբերականում առանց մեկնաբանության փակագրվել էր ակնապարտի մի Կոնստանդնուպոլսի ունեցած կոտորածի վերաբերյալ⁹⁷: 1896 թ. օգոստոսի կոտորածներից հետո շարժումը սկսեւ նոր եռանդով զբաղվել այդ թեմայով, դատապարտել թուրքերի ոճրագործությունները և փորձել պարզաբանել

93 Տե՛ս R. Luxemburg, *Gesammelte Werke*, Bd. 1, Berlin, 1970, էջ 57:

94 Տե՛ս B. Brentjes, *Humanistische und revolutionäre Bande zwischen Deutschen und Armeniern*, s. Akten des internationalen Dr. Johannes-Lepsius-Symposiums an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Halle (Saale), 1987, էջ 187:

95 Տե՛ս U. Feigel, նշվ. աշխ., էջ 48:

96 Տե՛ս անդ:

97 Տե՛ս անդ:

դրանց ենթարկեցաք: «Դա գալիս է Կոստանտնուպոլսից, ավանդական նախանձից և անվստահությունից,- գրում էր շարժման պարբերականը,- և նաև մարդկային կյանքին, մարդկային փառապանքին աննշան արժեքի վերագրումից...»⁹⁸:

Շարժումն, այնուհանդերձ, Թուրքիայի մասնավորապես Կոստանտնուպոլսի չէր հարում, այլ պահանջում էր հրավիրել համաեւրոպական մի քրիստոնեական մեղավորներին պարժելու համար⁹⁹: Բուդապեշտում 1896 թ. սեպտեմբերի 18-ին կայացած շարժման 7-րդ համաշխարհային կոնգրեսը նույնպես անդրադարձավ հայկական կոտորածներին՝ մեծ պետություններին կոչ անելով վերջապես ինչ-որ բան ձեռնարկել¹⁰⁰:

1890-ական թթ. երկրորդ կեսին պաշտոնական Գերմանիան, սակայն, ի դեմս կայսր Վիլհելմ II-ի, որդեգրել էր Արևելյան մի այնպիսի քաղաքականություն, որի նպատակն էր Մերձավոր Արևելքում քաղաքական և փոփոխական գերիշխանություն ձեռք բերել, և դա պարբերաբար իրականացվեց Գանդակագրած, առաջին հերթին հայկական կոտորածները հանդուրժելու գնով: Արդեն հիշարարկվեց, թե կոտորածների օրերին կայսրը, նաև իր պարբերաբար ուղարկվող որպիսի նոդաներով էին արտահայտվում սուլթանի հասերին, և որքան հստակ ըմբռնում էին ցուցաբերում հայերի դրության հանդեպ: Կարճ ժամանակ անց, սակայն, նրանք արդեն նախընտրում էին հայերի վիճակի մասին կարարալու լուրջ պահպանել՝ դա համարելով սուլթանի հետ հարաբերությունների զարգացման և Օսմանյան կայսրությունում փոփոխա-քաղաքական գերակայությունների ձեռքբերման կարևոր երաշխիք: Իր և իր կառավարության այդ նոր քաղաքականությունը խթանելու նպատակով Վիլհելմ II-ը արդեն 1898 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ձեռնարկեց իր երկրորդ ճանապարհորդությունը դեպի Թուրքիա:

Ճանապարհորդության համար արտաքուստ շարժառիթ էր ծառայում Երուսաղեմում գերմանական ավերարանական Փրկչի եկեղեցու օծումը, որի առթիվ կայսրը պաշտոնական հրավեր էր սրացել, սակայն դա միայն արտաքին շղարշ էր՝ Թուրքիայի հետ քաղաքական և փոփոխական հարաբերությունների խորացման բուն նպատակները ժամանակավորապես քողարկելու համար: Կայսրն իր բազմամարդ շքախմբով նախ պարբերաբար է մեկնել Կոստանտնուպոլիս, այնուհետև Երուսաղեմ եկեղեցու օծմանը ներկա գտնվելու համար, իսկ հետո այնպես ինչ՝ Դամասկոս:

Վիլհելմ II-ն անձամբ ևս ջանք չէր խնայում՝ գերազանցական շրջանում իր այցելության քաղաքական շարժառիթները գաղտնի պահելու համար: «Այն, ինչ մենք փնտրում ենք, նշում էր նա այդ առթիվ կարարած իր մի հայտարարության մեջ,- փայլը չէ, իշխանությունը չէ, փառքը չէ, երկրային բարիքները չեն: Մենք փափագում ենք, աղերսում ենք և ձգտում ենք միայն մեկ բանի՝ մեծագույն բարիքին, մեր հոգիների փրկությանը»¹⁰¹:

Նարկանդական է, որ պաշտոնական փրկեկարությունը մի կողմից հասարակությանն ապակողմնորոշելու և մյուս կողմից Վիլհելմ II-ի փառասիրությանը հագուրդ փակելու համար նրա ճանապարհորդությունը բնութագրում էր որպես մի նոր «խաչակրաց արշա-

98 Տե՛ս անդ:

99 Տե՛ս անդ, էջ 49:

100 Անդ:

101 Ernst Freiherr von Mirbach, *Die Reise des Kaisers und der Kaiserin nach Palästina*, Berlin 1899:

վանք», որը, սակայն, խաղաղ բնույթ էր կրում: Ժամանակակցի վկայությամբ՝ կայսրը պարգևատրվեց «վիքլեյ» էր միջնադարյան խաչակրաց արշավանքների և դրանք առաջնորդող գերմանական կայսրերի հիշողությունից¹⁰²:

Այս ճանապարհորդության լուրը հասարակության մեջ կրքերի երկակի շիկացում առաջ բերեց. քաղաքական շահերի գերակայությամբ առաջնորդվող շրջաններում այն ընդունվեց ոգևորությամբ: Գերմանաթուրքական երկկողմ հարաբերությունների սերտացման միջոցով Օսմանյան կայսրության փարաօթի փոփոխության և յուրացման ու դրանից բխող հնարավորությունները մինչև իսկ այն աստիճան էին գերազնահարկվում, որ փեսականներ էին ի հայտ գալիս՝ իբրև թե բերրի և նոր բնակեցված Միջագետքը գերմանացի գաղութարկներով բնակեցնելու մասին¹⁰³: Միաժամանակ փրկապետներ էր այն կարծիքը, թե Գերմանիան, Օսմանյան կայսրությունում և առհասարակ Մերձավոր Արևելքում իր դիրքերն ամրապնդելով, կարող էր դառնալ համաշխարհային տիրություն: Վիլհելմյան կառավարությունը հույս ուներ Թուրքիայի հետ սերտ համագործակցությամբ իր համաշխարհային քաղաքական ազդեցությունը մեծացնել և փարաօթաշրջանից դուրս մղել Անգլիային, Ֆրանսիային ու Ռուսաստանին, ընդ որում դրա իրականացման կարևոր գրավական էր համարվում Թուրքիայի հետ ցամաքային ճանապարհով կապվելու հնարավորությունը¹⁰⁴: Գերմանական կառավարության կարծիքով հենց միայն երկաթուղային ճանապարհի կառուցումը Մերձավոր Արևելքում Գերմանիայի համար այնպիսի ռազմավարական առավելություններ կստեղծեր Ռուսաստանի և Անգլիայի հանդեպ, որ այնուհետև դժվար չէր լինի նրանց այնպիսից դուրս մղելը: Գերմանական կառավարության և լիբերալ բուրժուազիայի համար, անկասկած, խիստ գրավիչ էր նաև Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների սերտացմամբ գերմանական արդյունաբերության համար վաճառահանման նոր շուկաներ ձեռք բերելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է հասարակական այն շրջաններին, որոնց համար առաջնահերթ էին կրթական և բարոյական գերակայությունները, ապա կայսեր ճանապարհորդության լուրը նրանց կողմից վրդովմունքով ընդունվեց, և դա առաջին հերթին այն պարզապես, որ կայսրն իր շրջագայությունը սկսում էր հայերի դահիճ Աբդուլ Նամիդի հետ հանդիպումով: Դա, ըստ այս շրջաններում հնչող փեսականների, ոչ միայն կայսրն էր վարկաբեկում իր ժողովրդի առաջ, այլև Գերմանիային՝ երոպական մյուս պետությունների առաջ, քանի որ նրանք նույնպես դավաճարների կհամարեին քրիստոնյաների դահիճի հետ կայսեր մերձեցումը¹⁰⁵:

Նայ ժողովրդի առնչությամբ գերմանացի քրիստոնյաների դիրքորոշումն, այնուհանդերձ, այլևս միասնական և միանշանակ չէր, ինչպես նախկինում: Շարժվելով, նկատի առնելով կառավարության նոր քաղաքական ուղղությունը, գերադասում էին այլևս չքննադատել

102 Տե՛ս այդ մասին բարոնուհի Վիլհելմին ֆոն Շպիտթեյնիցի՝ 1898 թ. հուլիսի 25-ին կատարած գրառումը, U. Feigel, նշվ. աշխ., էջ 84:

103 Տե՛ս անդ, էջ 83:

104 Տե՛ս անդ, էջ 92:

105 Տե՛ս անդ, էջ 84:

սուլթանին և չբարձրաձայնել հայերի դրության մասին: Մյուսները շարունակում էին կայսեր նոր Արևելյան քաղաքականության հանդեպ բացասական դիրքորոշում պահպանել: Ուրիշներն սկզբունքորեն դեմ լինելով սուլթանի հեղափոխական, չհրաժարվեցին Ավելայաց երկիրը փոխելու գաղափարությունից և մասնակցեցին ճանապարհորդությանը՝ սուլթանին հանդիպելու անախորժությունն աչքի առաջ ունենալով հանդերձ¹⁰⁶: Այդ առումով առավել սկզբունքային դիրքորոշում ցուցաբերեցին շվեյցարա-գերմանական երկրամասային եկեղեցիները, որոնց մեծ մասը հայկական կոտորածների պարճառով հրաժարվեց ուղեկիցներ պրամադրել կայսեր և բավարարվեց նրան ուղեքններ ուղարկելով¹⁰⁷:

Վիլհելմ II-ի այդ ճանապարհորդությունը լիովին փաստեց, որ նա հանուն Թուրքիայի հեղափոխական կապերի խորացման անվերապահորեն պարտասու էր հանդուրժել վերջինիս բոլոր ռճրագործությունները իր քրիստոնյա հպարակների դեմ: Դրա ամենացայտուն վկայությունը դարձավ Դամասկոսում նրա ունեցած ելույթը, որտեղ իր աջակցությունն էր խոստանում աշխարհի 300 միլիոն մահմեդականներին: Չնայած Վիլհելմ II-ի շրջանի դեկադար Բյուլովը ելույթները սղագրողին հրահանգել էր կայսեր այդ ելույթը որևէ մեկին չառաքել, քանի դեռ ինքը դա չէր սպուցել, այնուհանդերձ գերմանաթուրքական կապերի եռանդուն ջարդագով՝ Թուրքիայում գերմանական դեսպան Մարշալ Ֆոն Բիլերշտրայնը այդ ելույթի փոքրամասն արդեն հասցրել էր ուղարկել Բեռլին, որի արդյունքում այն հայրնի դարձավ նաև հասարակայնությանը¹⁰⁸:

Որպես արդարացում Վիլհելմ II-ի այդ ելույթի՝ ոմանք այն փաստակարար են արտահայտել, թե դա սոսկ ինքնաբերական արձագանք էր դրան անմիջապես նախորդող մի արաբի կողմից կայսեր հասցեյին կատարված ներքողական մի ելույթի, որի ընթացքում ընդգծվել էր նաև մուսուլմանների հանդեպ կայսեր ունեցած համակրանքը¹⁰⁹: Ինքնին հասկանալի է, սակայն, որ դա արդարացում չէր, քանի որ անհնար է ենթադրել, թե կայսրը, փրվելով ոգևորությունը, չէր պարկերացնում, թե ինչ էր ասում: Նրա այդ ելույթը հրապարակում հավաքված մահմեդական ունկնդիրների վրա մեծ ազդեցություն էր գործել: Ինչպես Միլլերին էր արձանագրել որպես ակնապարհ. «թուրքերը կայսերական սրագին ելույթից խիստ ազդված էին: Անշուշտ, երբեք այդպիսի բարձր դիրք ունեցող անձնավորության կողմից նման

106 «Մի՞թե Դուք հավատում եք, թե բողոքական քահանաներին հաճելի էր ամեն օր լսել սուլթանի գովքը, որի կայսրությունում քրիստոնյաները օրենքից դուրս են», - գրում էր այդ առնչությամբ «Die Zukunft» պարբերականը: Անդ, էջ 84: Կայսեր շրջանի մեկ այլ անդամ՝ պալատական քարոզիչ Դիանդերը, նույնպես իր հուշերում անդրադարձել է այն անախորժ փոխվորությանը, որ ունեցել է սուլթանի հեղափոխական ժամանակ: Անդ: Անգամ Ֆրիդրիխ Նաումանը, որը հեղափոխում ամեն կերպ ջանում էր հասարակայնության մեջ կայսեր ճանապարհորդության անհրաժեշտության և Թուրքիայի հեղափոխությունների խորացման հարցում ըմբռնում ձեռավորել, նույնպես նշել է, որ փոխելով սուլթանին՝ ամենեին ուռա բղավելու ցանկություն չի ունեցել: Տե՛ս F. Naumann, Asia, 5. Auflage, Berlin 1904, էջ 24:

107 U. Feigl, նշվ. աշխ., էջ 85:

108 Անդ: Բյուլովը, անկասկած, այդ ելույթի հրապարակումը փորձում էր կանխել այն մտախոհությամբ, որ մի կողմից մեծ փոփոխությունները դա կարող էին շարժառիթ դարձնել Արևմուտքում Գերմանիայի վարկաբեկման և նրա հանդեպ անբարենպաստ հասարակական կարծիք ստեղծելու համար, և մյուս կողմից դա կվերանգեր կայսեր վարկանիշը նաև իր սեփական երկրում: Այդ մտախոհությունը թերեւս հիմնավորված էր, քանի որ Գերմանիայի հասարակական, հափկապես եկեղեցական շրջաններում նրա վերոնշյալ արտահայտությունը զգալի վրդովմունք էր կրթեր հարուցեց: Անդ, էջ 85:

109 Տե՛ս անդ:

նշանակությամբ ու ջերմությամբ բնութագրվող խոսքեր դեռ նրանց ականջներին չէր հասել: Ընդհակառակը, նրանք վարժված էին այս աշխարհի մեծերից, մասնավորապես նաև բարեկամներից շարք խստաբարո բաներ լսելու: Նրանցից ոմանց մոզ աչքերից այրված այրելի վրա արցունքներ ի հայտ եկան»¹¹⁰:

Բնութագրական է, որ շրջագայության ընթացքում Վիլհելմ II-ի շքախմբում գրեթե ոչ ոք ոգևորված չէր սուլթանի հեղի հանդիպումներից: Մինչև իսկ Բյուրվը, ընդհանուր առմամբ, այն գնահատում էր բացասական գույներով: Ինչպես մյուսների, նրա վրա նույնպես սուլթանը որևէ դրական տպավորություն չէր գործել¹¹¹: Ի տարբերություն իր ամուսնու՝ կայսրուհին նույնպես ամենեւին ոգևորված չէր, մինչդեռ Վիլհելմ II-ը ճանապարհորդության ողջ ընթացքում մեծ ոգևորության մեջ էր և բազմիցս ապացուցեց, որ իր վերոնշյալ ելույթում թույլ տրված արքայազնությունը ակամա չէր կատարվել, այլ միանգամայն կշռադարձված էր: Փրկչի եկեղեցու օծման հաջորդ օրը, օրինակ, նա մի բաժակաճառում այնպես էր փառաբանել սուլթանին, մուսուլմաններին և առհասարակ իսլամը, որ Բյուրվը անմիջապես արգելեց դրա հրապարակումը: «Կայսրը նաև գրեթե ամեն օր շնորհակալական հեռագրեր էր ուղարկում սուլթանին, - նշում էր շքախմբի անդամներից մեկը, - մինչդեռ նրա ուղեկիցներն այդ ամենից հեղուկաբար բավական կշտացել էին»¹¹²:

Ինչպես տեսնում ենք, Վիլհելմ II-ն արդեն արմատապես փոխել էր իր վերաբերմունքը սուլթանի հանդեպ: Եթե նա նրան, ինչպես արդեն նշվել է, դեռ երկու տարի առաջ «**նողկալի մարդ**» էր անվանում, ապա այժմ զբաղված էր միայն նրան փառաբանելով: Դա պայմանավորված էր ոչ միայն կայսեր կողմից հեղափոխվող քաղաքական շահերին բարոյականության անվերապահ զոհաբերման՝ նախա պատրաստակամությամբ, այլև այն փառամոլությամբ և անկայունությամբ, որ բնութագրական էին կայսեր խառնվածքին:

Թուրք-գերմանական փոխհարաբերությունների սերտացումը, որ նկատելի էր դեռ 1889-ին Վիլհելմ II-ի՝ Կ. Պոլիս կատարած առաջին այցելությունից հետո, նրա երկրորդ՝ 1898-ի ճանապարհորդությունից հետո փաստորեն դարձավ Գերմանիայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը¹¹³: Թեև դա որքան անշրջելի և միանշանակ էր, կարող էր վկայել հենց իր՝ կայսեր կողմից վերադարձից հետո իր ճանապարհորդության վերաբերյալ հեղեղված հետևյալ նկարագրումը. «Ես հույս ունեմ..., որ իմ ճանապարհորդությունը նպաստել է այն բանին, որ գերմանական էներգիայի և գերմանական եռանդի համար նոր վաճառահանման շուկաներ բացվեն, և որ ինձ հաջողվել է ամրացնել փոխադարձ կապերը մեր երկու թուրք և գերմանացի ժողովուրդների միջև»¹¹⁴:

Վիլհելմ II-ի և սուլթանի միջև ձեռք բերված համաձայնությունների և կնքված պայմանագրերի արդյունքում երկու երկրների տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերություններն իրոք սկսեցին վերընթաց զարգացում ապրել: 1889-1913 թթ. գերմանական

110 E. F. von Mirbach, Die Reise des Kaisers..., էջ 366:

111 Տե՛ս U. Feigel, Das Evangelische..., էջ 85:

112 Տե՛ս անդ:

113 Տե՛ս W. von Kampen, Studien zur deutschen Türkeipolitik in der Zeit Wilhelms II, Kiel, 1968, էջ 20-21:

114 Տե՛ս E. F. von Mirbach, Die Reise des Kaisers..., էջ 403: Կայսեր ճանապարհորդության առանձին մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Wilhelm II, Ereignisse und Gestalten, Leipzig/Berlin, 1922.

ապրանքների արտահանումը դեպի Թուրքիա աճեց շուրջ 145 անգամ, իսկ թուրքական ապրանքների ներկրումը Գերմանիա՝ 32 անգամ: Չնայած դրան, սակայն, մինչև առաջին համաշխարհային պատերազմը Գերմանիան Թուրքիայի առևտրական գործընկերների շարքում շարունակում էր զբաղեցնել չորրորդ տեղը՝ առաջին երեք տեղերը գիջելով Անգլիային, Ավստրիային և Ֆրանսիային¹¹⁵:

Ինչևէ, կայսեր ճանապարհորդությունն ընդհանուր առմամբ դրական արձագանք ստացավ հասարակայնության կողմից, քանի որ նաև նրանք, ովքեր սկզբունքային և անդավաճան դիրքորոշում ունեին հայկական խնդրի առնչությամբ, հույսեր էին տածում, որ երկու կառավարությունների հարաբերությունների սերտացումը նպաստավոր պայմաններ կստեղծեր՝ Օսմանյան կայսրությունում հայոցության և առհասարակ հայանպասք աշխատանքների իրականացման համար: Նրապարակախոսության դաշտում այդ և հետագա տարիներին հայկական խնդիրների առնչությամբ ի հայտ էր գալիս երկբևեռ դիրքորոշում: Առանձին հրապարակախոսներ, կապկելով պաշտոնական դիրքորոշումը, փորձում էին այդուհետև ևս հայկական կոպրածները լուծության մալուկ, ավելին, հարկ եղած դեպքում դրանք ներկայացնել թուրքական քաղաքական տեսակետներին համապատասխան, իսկ ուրիշները շարունակում էին հանդես գալ ի պաշտպանություն հայերի և Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների իրավունքների:

Վերոնշյալ առաջին բևեռի ամենանշանակալից ներկայացուցիչը, թերևս, Ֆրիդրիխ Նաումանն էր՝ «Hilfe» ամսագրի խմբագիրը, որը եղել էր կայսեր ուղեկիցների շարքում և վերադարձից հետո հանդես եկավ մի շարք հրապարակումներով, իսկ հետո դրանց հիման վրա հրապարակեց «Ասիա» վերնագիրը կրող մի առանձին գիրք¹¹⁶:

Նաումանը գրում էր, թե Կոստանդնուպոլսում հանդիպել էր այնպիսի 19 տարեկան Վերա Բակվոլդ մի գերմանացու, որը նրան ասել էր. «Ես քրիստոնյա եմ, և առաջին պատվիրանը համարվում է մերձավորի հանդեպ սերը: Եւ ես ասում եմ, որ թուրքերը իրավացի են վարվել, երբ սպանել են հայերին: Թուրքը այլ կերպ չի կարող հայից պաշտպանվել, որն ամենաանպատասխանատու կերպով շահագործում է նրա ազնվությունը, ծուրությունը և մակերեսայնությունը: Նայել աշխարհում ամենավատ մարդն է»¹¹⁷:

Ըստ Նաումանի՝ դա տակ մեկ մարդու կարծիք չէր և բնութագրական էր համարվում ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Փոքր Ասիայում բնակվող հայերի համար: Կոստանդնուպոլսում նա ուրիշ բան չէր լսել, քան այն, որ հայերը Անգլիայի հեղափոխականներ էին, որոնք ուզում էին տապալել սուլթանին: Նաումանը միաժամանակ հավելում էր, թե իր վրա էլ թուրքերն ավելի լավ տրամաբանություն էին թողել, քան հայերը: «Մենք մեզ մահմեդականից երկնքի չափ հեռու ենք տեսնում, քանի որ նա խաչ չի կրում, շարունակում էր նա, և Արևելքի քրիստոնյայից նույնպես, քանի որ նրա խաչը կոտր է դարձել»¹¹⁸:

Տեղիական թուրքին համեմատում էր մի խոցված գազանի հետ, որն արձագանքում էր համարժեք կերպով: Նայերի հալածանքներին, ըստ նրա, հավանություն տալ չէր կարելի,

115 U. Feigel, նշվ. աշխ., էջ 92-93:

116 F. Naumann, Asia, 5. Auflage, Berlin 1904:

117 Անդ., էջ 31-32:

118 Անդ., էջ 110:

սակայն դրանք բնութագրական էին մահվան հոգեւարքում գտնվող պեղծության համար: Նա, այնուհանդերձ, նաև նշում էր, որ երոպական քրեությունները, ներառյալ Գերմանիան, անողորակիորեն մեղավոր էին կոպտրածների համար: Թուրքիան, ըստ, նրա, երկար գոյատևելի չէր կարող, սակայն Գերմանիան պետք է նրան այնքան ժամանակ աջակցեր, մինչև բավական ուժեղ կլիներ՝ Օսմանյան կայսրությունը ժառանգելու համար: «Մենք կարիք ունենք ժամանակի, որպեսզի կարողանանք աճել և դառնալ,- գրում էր Նատմանը:- Այդ ժամանակի կարևորությունը ճանաչելով և սպասելով՝ մենք կիրականացնենք Աստծո կամքը»¹¹⁹:

Գերմանիայի քրիստոնյաները, Նատմանի կարծիքով, իրավունք ունեին օգնելու հայերին, բայց այդ օգնությունը չպետք է քաղաքական բնույթ կրեր՝ վնասելով Գերմանիայի պետական քաղաքականությունը, քանի որ, ըստ նրա, հայերին քաղաքականապես օգնելը կնշանակեր աջակցել Անգլիային: Գերմանիան, նրա կարծիքով, հայերին լավագույնս կկարողանար այն ժամանակ օգնել, երբ կամրապնդեր իր ազդեցությունը Օսմանյան կայսրությունում¹²⁰:

Նատմանն, այսպիսով, փորձում էր քաղաքական անարարություն ձևավորել հայերի հանդեպ, և դեռ ավելին, դա անելու համար չէր զլանում հայերի նկատմամբ բացասական ընկալում ձևավորել: Նույն միայն այդ վերջին հանգամանքը բավական էր՝ փաստելու համար, որ հայկական խնդրում Նատմանի դիրքորոշումը հենվում էր ոչ թե անաչառ դիտարկումների կամ թյուրիմացության, այլ սոսկ այն նյութական շահերի վրա, որոնք Գերմանիան ակնկալում էր ձեռք բերել Թուրքիայի հետ մերձեցման միջոցով: Ի վերջո, ինչպես նշում է Ու. Փայգելը, ոչ ոք նրան չէր հարկադրում քաղում կարարել գերմանացի բրուսի խոսքերից¹²¹ և այդպիսով սրելով կանխակա պարկերացում մի ամբողջ ժողովրդի վերաբերյալ:

Նայկական հարցի հանդեպ Գերմանիայում հասարակական դիրքորոշում ձևավորող երկրորդ բևեռը ներկայացնում էին դր. Յոհաննես Լեփսխուսի կազմակերպության ներսում և շուրջ համախմբված անհատները, որոնց շարքում նախ հարկ է հիշարարել մեծանուն հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ճանապարհորդ և լրագրող դր. Պատու Ռոբերթսին:

Նայասարանի հետ նրա առաջին շփումները թվագրվում են 1894-ով, երբ նա, իրազեկ դառնալով Սասունի կոպտրածներին և Օսմանյան կայսրությունում հայության համար սրելով ծանր իրադրությանը, մի հեղափոխական ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Նայասարան¹²²: Այնուհետև, 1897-1902 թվականների և 1909-ի ընթացքում նա ձեռ-

119 Անդ, էջ 140:

120 Տե՛ս անդ, էջ 141:

121 Ս. Feigel., Das Evangelische..., էջ 88:

122 Այսպես հանդիպելով հայ աստվածաբան Կարապետ վ. Տեր-Մկրտչյանին և խրախուսվելով նրա կողմից՝ Ռոբերթսը մտադրեց սրելով մի կազմակերպություն, որը կարող էր աջակցել Նայ Եկեղեցու բարենորոգմանը և այդ նպատակով համապատասխան ուժերի պարաստման համար երիտասարդ քաղաքացիներին հայ աստվածաբաններին Գերմանիայում ուսանելու հնարավորություն ընձեռել: Ըստ այդմ, Գերմանիա վերադառնալուց հետո նա «Die Christliche Welt» պարբերականի բարեկամների հետ 1897 թ. հոկտեմբերի 12-ին Այգենախում կայացած հանդիպման ժամանակ ծրագրեց հայ ուսանողների հրավիրել Գերմանիա և կրթաթոշակներ հատկացնել նրանց: Դա իրագործելու համար Ռոբերթսին, պարբերականի խմբագիր Մարտին Ռադեր և մի շարք բարեկամների հետ սերտ համագործակցությամբ հիմնադրվեց «Das Notwendige Liebeswerk»

նարկեց եւս հինգ հեղափոխական ճանապարհորդություն դեպի Նայասարան, որոնց ընթացքում կարողացավ ինչպես հարկն է իրագրելվել Նայասարանում քիթող իրադրությանը եւ ամբողջացնել իր պարկերացումներն ինչպես հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունների եւ նկարագրի, այնպես էլ նրա հարեւանների, գործիքների, վրացիների, թուրքերի եւ այլոց վերաբերյալ: Այդ ճանապարհորդություններին հաջորդում էր բազմաթիվ աշխատությունների, պեղեկագրերի եւ հողվածների լույսընծայումը, որոնք, մերկացնելով հայ ժողովրդի վերաբերյալ Գերմանիայում ավանդաբար առկա թուրքմբռնումները, գերմանացի ընթերցողին հնարավորություն էին ընձեռում ստուգապես հաղորդակից դառնալ հայ ժողովրդի պատմությանը, պատմամշակութային արժեքներին Նայասարանում քիթող իրադրությանը: Նարկանշական է, որ հայ ժողովրդին համարելով «Արեւելքի ամենածոված ժողովուրդը», Ռոբերտին ինչպես Կովկասի, այնպես էլ ողջ Արեւելքի զարգացման հարցում կարևորագույն եւ վճռորոշ դերը վերապահում էր նրան: Անդրադառնալով Թուրքիայի հեղափոխությունների սերպացման՝ Գերմանիայի քաղաքականությանը՝ Ռոբերտին իր հրապարակումներում, որպես կանոն, ընդգծում էր այն հանգամանքը, որ Գերմանիան պետք է առաջին հերթին շահագրգռված լիներ հայերի՝ «Արեւելքի ամենամշակութային, օժիված եւ աշխատասեր» ժողովրդի հեղափոխական ունեւնալու հարցում, եւ այնպեղ իր անստեղծական, մշակութային ու քաղաքական այլ ծրագրերն իրագործելու համար պետք է հենվեր հայերի վրա: «Եւ, մասնավորապես, հայ ժողովրդի ուսյալ ներկայացուցիչների հեղ իմ շփումների ընթացքում մշտապես կրկին ու կրկին փաստել եմ,- գրում էր նա,- թե հայը միջին հաշվով որպիսի զարմանալի հեղափոխամբ է մեր երապական մշակութի ամենաառաջնակարգ հնարավորություններին քիթապելում: Առաջին հերթին ֆենոմենալ է լեզուների յուրացման՝ նրա քաղանդը...: Մեկ այլ նկարառում, որ եւս հաճախ հայտնել եմ, այն է, որ Կովկասի ժողովուրդներից ոչ ոք երապական անստեղծական նկարամամբ այնչափ ըմբռնողության ձիրք չունի, որչափ հայերը, եւ այն էլ ամենաքաղքեր բնագավառներում՝ հե-

(Անհրաժեշտ օժանդակություն) կազմակերպությունը: Վերջինիս պարասխանատուները դարձան գերմանական կողմից Ռոբերտին, իսկ հայկական կողմից Տեր-Մկրտչյանը, որը 1894-ից դասավանդում էր Էջմիածնի Գեորգյան ճեմարանում եւ Գերմանիա ուղարկվող ուսանողներին ընտրում էր իր աշակերտներից: Այն, թե ինչպիսին էր Ռոբերտին եւ իր իսկ կողմից հիմնված ընկերության դիրքորոշումը Նայ Առաքելական Եկեղեցու բարենորոգության խնդիրների վերաբերյալ, կարող են վկայել 1898-ին «Die Christliche Welt» պարբերականում Ռոբերտինի կողմից «Բնյի կարիք ունի Նայոց Եկեղեցին» խորագրով հրապարակված երեք ծավալուն հողվածները: Այսպեղ իհարկե անհնար է հանգամանակից անդրադառնալ այդ հրապարակումներին: Կարելի է միայն նշել, որ նրա անստեղծականներն այն աստիճան համահունչ էին հարցի առնչությամբ «Արաքս» պարբերականում Կարապետ Տեր-Մկրտչյանի եւ այլ առաջադեմ հոգեւորականների կողմից արտահայտված կարծիքներին, որ ժամանակակիցներից ոմանք Ռոբերտինի մքերը պարզապես համարել են «հայկական անստեղծականների վերաքաղաքությունը»: Միանշանակորեն մերժելով ամերիկյան բողոքական քաղաքների գործկակերպը, որոնք հայ եկեղեցու «բարենորոգման» պարովակով պառակտում էին ինչպես եկեղեցին, այնպես էլ համայնքները, Ռոբերտինը դավանում էր այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն ու եկեղեցին ունենին ողջ անհրաժեշտ ներուժը ձեռամուխ լինելու սեփական եկեղեցին բարենորոգելու եւ այդ կերպ այն առավելագույնս ազդեցիկ ու կենսունակ դարձնելու գործին, իսկ այն, ինչի կարիքն ունենին հայ հոգեւորականները, նրա համոզմամբ, գիտական աստվածաբանական կրթությունն էր, որը եւ նրանց պետք է քրամադրվեր «Անհրաժեշտ օժանդակություն» ընկերության միջոցով: Տես **Խ. Ղազարյան**, Բարենորոգչական նախաձեռնությունները Նայ Առաքելական Եկեղեցում ԺԹ. դարի վերջին քառորդին եւ 20-րդ դարի առաջին կեսին, Էջմիածին, 1999, էջ 45: Նանգամանքների բերումով ընկերությունը կարողացավ Գերմանիայում աստիճանվել միայն հինգ հայ ուսանողների կրթությունը (Նակոր Թուփչյան, Արաքսյան Աբելյան, Միսաք Կոստիկյան, Գալուստ Տեր-Գրիգորյան եւ Տիգրան Մեսրոպյան):

ռախտսի օգտագործումից մինչև բաժնետիրական ընկերության կամ լրագրային գործի կազմակերպումը: Գրեթե յուրաքանչյուր հայ ի վիճակի է որևէ պարենի պահի գործնականում ձեռնամուխ լինել ցանկացած գործի: Բացի այդ, նա ունի հոկտոբրական, կարելի է ասել՝ նաև գրական-լրագրողական ջիղ: Տպագրված հայապատ գրականության, թերթերի և ամսագրերի զանգվածը հայ ժողովրդի և մասնավորապես նրա ուսյալ անդամների թվաքանակի համեմատ չափազանց մեծ է: Այդ ամենն անհրաժեշտ է խմանալ Առաջավոր Ասիայի՝ հայերի բնակության վայրերն ընդգրկող հարվածի ներկա և առավել եւս ապագա զարգացման հարցում այդ ժողովրդի նշանակության վերաբերյալ ճշմարիտ պարկերացում կազմելու համար: Այդ նկատառումներն իմ մեջ արմատավորվել են ոչ թե մի եզակի թուփիկ այցելության, այլ բազմաթիվ երկարատև այցերի և դիտարկումների ընթացքում, որոնց արդյունքները հասարակել են նաև իմ հաճախակի շփումները իրենց հայրենիքից դուրս գտնվող հայերի հետ: Ես գիտեմ Արևելքի գրեթե բոլոր հին մշակութային ժողովուրդներին, որոնք առանց բացառության նախկին ժամանակներում ավելի լավ օրեր են փեսել, և իմ ամբողջ փեսածից ու ապրածից հետո ունեմ այն համոզումը, որ նրանցից ոչ մեկին վիճակված չէ Արևելքի գալիք զարգացման հարցում ավելի նշանակալից դեր խաղալ, քան հենց հայերին»¹²³:

Նարկ է նշել, որ Ղալկական խնդրի հանդեպ վերոնշյալ երկու բեկեռացված դիրքորոշումները գերմանական հրապարակախոսության մեջ որոշակի վայրէջքներով և վերելքներով շարունակեցին գոյարկել ընդհուպ մինչև 1913-ը:

123 P. Rohrbach, *Vom Kaukasus zum Mittelmeer. Eine Hochzeits- und Studienreise durch Armenien*, Leipzig 1903, p. 14-15.